

ՆԻԻԹԵՐ ՀՈՒՆԳԱՐԱՅԱՅ ԳԱՂՈՒԹԻ ՊԱՏՄՈՒԹԵՆԵՆ

ՀԱՄԱՆՈՒՆ ԵՐԵՔ ՀԱՅ ԵԿԵՂԵՑԱԿԱՆՆԵՐ ԹՐԱՆՍԻԼՎԱՆԻՈՅ ՄԷՋ
ԵՒ ԱՆՈՆՑ ՅԱՐԱԲԵՐՈՒԹԻՒՆԸ ԵՐՆՇ. ՄԵԻԹԱՐ ԱՐԲԱՀՕՐ ՀԵՏ
(1719 - 1736)

Ներկայ տողերուն նպատակն է լուսաբանել Մխիթար Աբբա-
հան Ժամանակակից երեք հաղանդում եկեղեցականներու կեանքն ու
գործունեությունը եւ անոնց յարաբերությունը Մխիթար Աբբահան
հետ:

Ուսումնասիրության առիթ տուած է Գերպ. Գովրիկեանի եւ
ուրիշ հեղինակներու մօտ սպրդած այն սխալը՝ որով իրարու հետ
կը չփոթեն Տէր Մինաս Թորոսեան եւ Տէր Մինաս Պարոնեան անու-
նով երկու եկեղեցականները:

Գերպ. Գովրիկեան, իր Դրամսիրումնիոյ Հայոց Մետրապոլիսը
գրքին մէջ, խօսելով Հ. Մանուէլ Վրդ. Խոսեփարեանի առաջնու-
թեան մասին՝ վը գրէ հետեւեալը. «Ժամանակակից տարեգրքերէն
կը կարդանք՝ թէ 1729ին Եղիսաբեթուպոլսոյ աղագայնոց խրկեց զՀ.
Մանուէլ իբրեւ առաջնալ եւ ուսուցիչ»¹:

Այսքանը ճիշտ է: Խօսքը Հ. Մանուէլ Վրդ. Խոսեփարեանի եր-
կրորդ առաջման մասին է, ըստ Ս. Ղազարի վանքի Ժամանակա-
գրութեան: Յաջորդ հատուածը, սակայն, չի համապատասխաներ
իրականութեան. «Բայց ասկէ ետքը տարի յառաջ կամ 1722ին, ար-
դէն նոյն ըրաւ Կերլայի քաղաքին, երբ անոնց փափաքանացը համե-
մատ, իրենց խրկեց զՀ. Մինաս Թորոսեան շատ հմուտ, գործունեալ
ու ձեռնարկու անձն...»²:

Նախ եւ առաջ՝ 1722ին ղրկուողը ոչ թէ Տէր Մինաս Թորոս-
եանն էր, այլ Տէր Մինաս Պարոնեանը: Յետոյ՝ ո՛չ Տէր Մինաս Թո-

րոսեան, ոչ ալ Տէր Մինաս Պարոնեան ղրկուած են Մխիթար Աբ-
բահան Կողմէ, քանի որ անոր աշակերտները չէին. այլ Մխիթար
ղրկած է, ինչպէս մեր նախնեթաց մէկ ուսումնասիրութեան մէջ
տեսած ենք՝ իր աշակերտներէն Հ. Մանուէլ վարդապետը, որուն
առաջնութիւնը ոչ միայն Կերլայի համար էր, այլ կը տարածուէր
նաեւ մինչեւ Եղիսաբեթուպոլիս, որ նոյն ատեն տակաւին Պաշտա-
լով կը կոչուէր³:

Գովրիկեան, խօսելով Տէր Մինաս Թորոսեանի մասին, կը գրէ
նաեւ. «Աս է այն անձը՝ որուն ձեռնտուութեամբ թէ՛ Հայաքաղա-
քացիք ու թէ՛ Եղիսաբեթուպոլսեցիք կ'ընդունին Կարորոս կայսրմէն
արտօնութեան հրամանագրերն»⁴: Այս հատուածին մէջ ալ կը կըրկ-
նուի միեւնոյն սխալը: Կայսերական հրամանագրերը ինքնին Տէր
Մինաս Պարոնեանի ջանքերուն վերագրուելու են, եւ ոչ թէ Տ. Մի-
նաս Թորոսեանին:

Նման սխալ տուեալներու կարգին է Տէր Մինաս Պարոնեանի
առաջնութեան վերջաւորութեան մասին այն վարժիքը՝ թէ «գինքը
դեռ 1733ին Դրամսիրումնիա Հայոց մէջ... կը գտնենք»⁵: Իրակա-
նութեան մէջ, Պարոնեան 1733 թուականին հեռացած էր Թրանսիլ-
վանիայէն եւ կը գործէր անոր արեւմտեան սահմաններուն վրայ՝ Թե-
մեշվար քաղաքին մէջ, ինչպէս պիտի տեսնենք:

Նման սխալներու մէջ ինկած է Գերպ. Գովրիկեանի Ժամանա-
կակից Խաչիկ Սոնկոթեան հունգարահայ պատմաբանը եւ երկու Մի-
նասներու դերերը խառնած իրարու հետ: Ուստի նոր անճշտութիւն-
ներու առաջն առնելու համար, երրորդ Տէր Մինասի մը փեւ՝ այն է
Խնկանոսեանի կամ Դանիէլեանի կենսագրական տիժերն ալ ուղեցինք
զուգորդել ներկայ ուսումնասիրութեան, որպէսզի աւելի ամբող-
ջական ըլլար Մխիթար Աբբահան Ժամանակակից Թրանսիլվանիոյ Հայ
եկեղեցականութեան մասին այս համապատկերը:

Մեր քննութեան իբր աղբիւր ունենալով գլխաւորապէս Ս. Ղա-
զարի ղրկանը, աւելի երկարօրէն կանգ առած ենք 1719-1736 Ժամա-
նակամիջոցին յրաւ, գորհանալով համառօտ ակնարկով մը միայն յի-
շեալ եկեղեցականներու կեանքի վերջին տարիներու մասին:

3. Հ. ՂՈՒԿԱՍ ՖՈԿՈՒՆԱՆ, Մխիթար Աբբահայր եւ Թրամսիրումնիոյ Մխիթարեան
առաջնութեան առաջին շրջանը (1719-1723), «Բագմատէպ», ՃԼԵ (1977), էջ
148-162:

4. ԳՈՎՐԻԿԵԱՆ, ԲՂ. ԳԺ., էջ 161:

5. ԱՅԳ, էջ 164:

1. Հ. Գ. ԳՈՎՐԻԿԵԱՆ, Դրամսիրումնիոյ Հայոց Մետրապոլիսը, ՎԻՆՆԱ, 1896,
էջ 160:

2. ԱՅԳ, էջ 160:

ՏԵՐ ՄԻՆԱՍ ԹՈՐՈՍԵԱՆ

(1690 – 1760)

Մխիթար Արքայապետ անձամբ ճանչնալու առիթը ունեցած է այս եկեղեցականը՝ երբ ան 1719ին, Հռոմէն վերադարձի ճամբուն վրայ, կ'ուղղուէր դէպի իր 'Հայրենիքը՝ Թրանսիլլանիա': Աւելի մօտէն կը ծանօթանայ անոր՝ Տէր Յովնան եպիսկոպոսի միջոցով, որ Թրանսիլլանիա առաքելութեան տեսչերէն էր Հ. Մանուէլ վարդապետին հետ, եւ մանրամասն տեղեկութիւններ կը հաղորդէր Մխիթար Արքայապետին Տէր Մինասի ընթացքին մասին, մանաւանդ անոր ցոյց տուած յայտնի դիմադրութեան՝ որուն պատճառով է որ 'Հաւանաբար Տէր Յովնան աւելի երկար մնացած չէ այնտեղ':

Ասով հանդերձ՝ Տէր Մինաս Հ. Մանուէլ վարդապետին հետ աւելի մեղմ վարուած է³: Սակայն ուժգնօրէն ընդդիմացած է նաեւ Հ. Մանուէլին՝ այս վերջինիս յաջորդին նշանակումի հարցին մէջ, որովհետեւ իր փափաքն էր որ անիկա ոչ թէ Հռոմէն, այլ Լեհաստանէն ըլլար⁴: Այս անհամաձայնութեան պատճառն այն էր՝ որ ինքը Տէր Մինաս արժանապատիւ լեհահայ եկեղեցական Տէր Ստեփանոս Ստեփանեան-Ռօշթայի քրոջը դաւակն էր:

Իր իսկ միակցութեամբ՝ 45 տարեկան էր 1735ին, ուստի ծնած ըլլալու էր 1690ին⁵:

Հազիւ 30 տարեկան՝ կը յաջորդէ Տէր Ղազար Պոստախեանին, Կերլայի մէջ, ժողովրդապետի պաշտօնով:

Տէր Մինաս Թորոսեան, Տէր Յովնան եպիսկոպոսին նկատմամբ բաւական զօրաւոր ընդդիմութիւն մը ցոյց տալէն ետք, չարունակած է նոյն պայքարը մղել նաեւ՝ Հռոմէն ղրկուած Տէր Մինաս Պարոնեան աստուածաբանութեան վարդապետին եւ առաքելին դէմ, այն ակնկալութեամբ որ «այցելու»ի եւ «փոխանորդ»ի պաշտօնները իրեն յանձնուէին:

Կերլա Հայաքաղաքի դատաւոր «Պիբօլ» Աղա Նիկօլ Մատուրօ-վիչ, որ կը գրէր Մխիթար Արքայապետ 1723ի վերջերը, անհամաձայ-

1. Տես «Բաղմապէս», ՃԼԵ (1977), էջ 142:

2. Անդ, էջ 150-151, 153, 155-157:

3. Անդ, էջ 160:

4. Անդ, էջ 161:

5. SZONGOTH KRISTOF, Szamosujvár Szabad Királyi Város Monografiaja 1700-1900. ՍՈՆԿՈԹ ՔՐԻՍՏՈՓՈՐ, Կերլա արքեպիսկոպոս քաղաքի մասնակազմութիւնը, 1700-1900, տպ. Կերլա 1901-1903, Ա. հտ., (1901), էջ 365:

նութեան որեւէ նշան չտեսնելով՝ վ'ապահովէր Մխիթար Արքայապետին տեղւոյն անդորրութեան մասին⁶:

Սակայն, նամակի վերութեան թուականէն տասը օր չանցած՝ պայքարը ծայր կու տար Կերլու Մինասներուն միջեւ:

Տէր Մինաս Պարոնեան իր սրտին ցաւերը նախ իր խաչատուր վարդապետ Առաքելեանին կը յայտնէ այսպէս. «Ոչ գոյ աստ կարգ եւ օրէնք: Ես մէկ վերալիւ խրատեմ, Տէր Մինասն հակառակ կը խրատէ, վասն նախանձութեան ներկայութեան իմոյ: Յամենայն ժամանակ իրիւ եւ խռովութիւն կու անեն: Ոչ կարեմ զամենայն բանս ծանուցանել: Միայն աղաչեմ զԱստուած զի համբերութիւն տացէ ինձ»⁷:

Միւս կողմէ՝ ինքը Տէր Մինաս Թորոսեանն ալ կը դանդաւորէ Հ. Մանուէլ վարդապետին, որուն բացակայութեան համար շատ կը ցաւի իր նամակին մէջ. «Այժմ ծանեալք զքաղցրութիւնն – կը գրէ – զոր ունէիր ի վերայ մեր, թէ՛ հոգեւոր, թէ՛ մարմնաւոր: Այժմ ասեմք թէ ո՛ւր է Հ. Մանուէլ, քանզի յոյժ ծուլութեամբ ընթանայ հոգեւորն. զի մեր Պ. Միսոնարն աւելի սիրէ զաղխարհիս փառքն, քան թէ զհոգեւորն եւ աղին»⁸:

Այս անկարգ կացութեան մասին կը լռէ Տէր Նիկօլ Ակոբեան առ Հ. Մանուէլ վարդապետ ուղղած իր նամակին մէջ եւ միայն Տէր Մինասի մօրը կողմէն բարեւներ կը դրիէ⁹:

Խաչատուր վարդապետ, 'հազիւ տեղեկացած Տէր Մինաս Թորոսեանի բռնած դիրքին՝ Տէր Մինաս Պարոնեանին դէմ, 1723 Յուլիս 17 թուակիր նամակով մը փմաց կու տայ Հռոմի Պրոպագանդայի Կարդինալին եւ ճիշտ չի գտներ որ Տէր Մինաս Թորոսեան «փոխանորդ»ի պաշտօնը ունենար, ինչ որ Հռոմէն ղրկուած առաքելին կը վիճակէր: Նոյնպէս համաձայն չ'երեւիր՝ որ երկրին եպիսկոպոսը աւելի Տէր Մինաս Թորոսեանին ուղէ յանձնել այդ պաշտօնը քան թէ Տէր Մ. Պարոնեանին¹⁰:

Տէր Մ. Պարոնեան կը յայտնէ իր տպաւորութիւնները դառն չեչտով մը Թորոսեանի բռնած ընթացքին դէմ, որ «Շիկամօրուս» կը յորջորջուէր եւ որ «չի գաղբիր նախատել իր չարութեամբ ու սուտերով՝ ժողովուրդին առջեւ»: Իրեն համաձայն, Տէր Մինաս Թո-

6. Նիկօլ Մատուրօ-վիչ, Կերլայէն առ Մխիթար Արքայապետ, Վենետիկ, 1723 Սեպտ. 8 (Դիւան Ս. Ղազարի):

7. Տէր Մինաս Պարոնեան, Կերլայէն առ խաչատուր վարդապետ, Վենետիկ, 1723 Սեպտ. 19 (Դիւան Ս. Ղազարի, նամականի խաչատուր վրդ.):

8. Տէր Մինաս Թորոսեան, Կերլայէն առ խաչատուր վրդ., Վենետիկ, 1723 Դեկտ. 29 (Դիւան Ս. Ղազարի, նամականի խաչատուր վրդ.):

9. Տէր Նիկօլ Ակոբեան, Կերլայէն առ Հ. Մանուէլ վրդ., Վենետիկ, 1723 Դեկտ. 29 (Դիւան Ս. Ղազարի):

10. Archivio de Propaganda Fide (= AP), Scritture originali riferite nelle Congregazioni Generali (= SOCG). AP, SOCG, v. 641 (1723), f. 67.

րոսեան «մարդ մըն է որ ոչ մէկ ուսում առած է, բան չի գիտեր եւ կ'արհամարհէ ու արհամարհէր կու տայ իմ թելադրութիւնները, եւ այս ամէնը կ'ընէ որովհետեւ ես՝ միայն քարոզիչի անունով եկած եմ հոս»¹¹ :

Կրկին ու կրկին կը խնդրէ Պարոնեան՝ որ Հռոմ, նկատի առած իր կացութիւնը եւ մանաւանդ այն պարագան՝ որ ժողովուրդին ալ դաժմակցութիւն կը տրուի, նոր կառավարիչ մը լըրկէ Թրանսիլվանիա. այլապէս՝ իր սրտի ցաւը պիտի չդադրէ «խռովութիւններու եւ դաժմակցութիւններու» երեսէն¹² :

Տէր Մինաս Պարոնեան նախատեսելով որ ի ղուր պիտի ըլլան իր ջանքերը հաշտութեան գալու Թորոսեանի հետ, 30 Ապրիլ 1724 թուակիր նամակով կը ներկայացնէ իր հրաժարականը «արտասուալիւր աչքերով»¹³, եթէ ուրիշ փոփոխութիւններ չընային: Պարոնեան՝ ոչ միայն խաչատուր վարդապետին, այլ նաեւ Մխիթար Աբբահայր ալ գրած է ժամանակին քանի մը նամակներ, որոնք Մխիթար Աբբահայր ստացած չէ: Միայն 19 Մարտ 1724 թուակիր նամակը առած է Մխիթար Աբբահայր՝ որուն պատասխան տուած է 3 Յունիս թուակիրով: Գալով Կերլայի մէջ գոյատեւող անհամաձայնութեան, նամակին վերջաւորութեան Մխիթար աբբայն միայն կը գրէ. «Լուայ ի դրոյդ՝ զի բազում վիշտս կրես, քայց գիտես՝, զի նաեւ զմեծ վարձս ընդունելոց ես ի Տեառնէ»¹⁴:

Մինչ այս՝ Կերլայի անհամաձայնութեան խնդիրը կը յանձնուի Վիեննայի Պապական Նուիրակին աշխուրջ քննութեան, որ յետ լուսաբանութիւններ ստանալով՝ տեղեկացնէր Ս. Ժողովին: Թրանսիլվանիոյ պատասխանատու եկեղեցականները, ի մանկութենէ ծանօթ Տէր Մինաս Թորոսեանին, որեւէ աննպաստ արտայայտութիւն չեն ունենար. ընդհակառակն կ'արդարացնեն զինքը պաշտօնական նամակներով: Ահա, այս պատճառով ալ հարցերը չեն գտներ իրենց լուծումը¹⁵:

11. AP, SOCG, v. 641 (1723), f. 68.

12. AP, SOCG, v. 652 (1726), f. 198. Որքան որ Տէր Մինասի այդ 24 Դեկտ. թուակիր նամակը Հռոմ հասած էր 1724 Ապրիլ 1ին (հմտ. AP, Lettere originali riferite nelle Congregazioni Generali (= LOGC), v. 118 (1724), f. 84v), սակայն նամակին պատասխանը կ'ուշանայ, որովհետեւ Կարդինարը գրադած էր Քահանայապետի ընտրութեամբ եւ միայն Յուլիս 15ին կ'ընայ պատասխանել (հմտ. AP, SOCG, v. 652 (1726), f. 199).

13. AP, SOCG, v. 652 (1726), f. 208-209.

14. Մխիթար Աբբահայր, Վենետիկէն, առ Տէր Մինաս Պարոնեան, Կերլա, 1724 Յունիս 3 (նամակն ի Մխիթար Աբբահայր, Թ. 183):

15. Վիեննայի Նուիրակը ուղղակի Ալպա Եռլիայի եպիսկոպոսարանը կը գիտէ՝ հարցաքննութեան նպատակով (AP, SOCG, v. 652 (1726), f. 199), եւ յիշատի պատասխան կ'առնէ Andrea Sigary քարտուղարէն (f. 200), ինչպէս նաեւ ասոր փոխանորդ՝ D. Martinus Demeterէն (f. 203-204):

Կարծես քիչ մը կը հանդարտին խռովութիւնները եւ գայթակղութիւնները աննշմար կը դառնան: Այս ապաւորութիւնը կ'ունենանք՝ կարդալով Տէր Յովհաննէսի 1724ի կէսերուն առ Հ. Մանուէլ վարդապետ ուղղած նամակը. «Եւ թէ վասն վարդապետին կողմանէ հարցանես, կը գրէ, Աստուծոյ փառք, լաւ է հետ ժողովրդեանն եւ սիրով կու վարվի. միայն հետ Տեառն Մինասին փոքր մի կու դադարալի վասն անհնազանդութեան. քայց այժմ խաղաղութեամբ են»¹⁶: Տ. Մինաս Պարոնեան անգամ մըն ալ կը հրաւիրէ Պաշտօնաւոր վարդապետի ուշադրութիւնը իր պարագային վրայ, 16 Սեպտեմբեր 1724 թուակիր նամակով, խնդրելով որ Ալպա Եռլիայի նորընտիր եպիսկոպոսը, Գերպ. Անթալֆի, յիշելով իր նախորդին՝ Գերպ. Մարթոնֆի փափաքը, նպաստէր որ Առաքելական առաջնորդ մը ղրկուէր Թրանսիլվանիոյ վրայ¹⁷:

Այսքան նեղութիւններէ ետք, Տէր Մինաս Պարոնեան հիւանդանալով կը հեռանայ Կերլայէն. զինքը նոյն տարուան Նոյեմբերին արդէն Վիեննա կը գտնենք, ուր Կերլա քաղաքին համար մենաշնորհներ ստանալու կը պարագայի¹⁸:

Առանց հակառակորդի մնալով, Տէր Մինաս Թորոսեան Կերլայի մէջ իր կարելին կ'ընէ՝ ջանալով մանաւանդ Եպիսկոպոսին հաճելի դառնալ, որմէ կը յաջողի ի վերջոյ «բնականաբար Կերլայի» (Կերլայի ժողովրդապետ) տիտղոսը ստանալ եւ 1727 Սեպտ. ժողովին արձանագրութեան մէջ՝ Տէր Մինաս Պարոնեանի անունին ապկը նոյն տիտղոսով կը ստորագրէ¹⁹:

Ուրիշ մասնաւոր տեղեկութիւններ չունինք իր գործունէութեան շուրջ: 1729ին կ'աջակցի Ստեփանոս Ստեփանեան վարդապետին, որ Կերլայի մէջ երեք հոգեւոր Եղբայրութիւններու կանոնագիրքներ կը յորինէ. հոս կը յայտնուի Տէր Մինասի նոր տիտղոսը «արհիտիագոնութեան», զոր կը վայելէր 1726էն սկեալ²⁰:

Առաջին Եղբայրութիւնն էր «Եղբայրութիւնս Սրբոց Յովակիմայ եւ Աննայի»: «Յամի Տեառն 1729 եւ Հայոց ՌՃՀԸ Ուրիս Ամսոյ 15: Յանուն Աստուծոյ: Ստեփաննոս Ստեփանեան Ռաշալայ Սրբազանի Աստուածաբանութեան վարդապետի, Վիդարիոս եւ Բրեքողիոս Սրբանիսլաւով, աստանօր այց արար Եկեղեցեացս Հայոց Դրանդիլանիոյ:

16. Տէր Յովհաննէս Խտէլպէյ, Պաշտօնովէն, առ Հ. Մանուէլ վրդ., Վենետիկ, 1724 Յուլիս 8 (Դիւան Ս. Ղազարի):

17. AP, SOCG, v. 652 (1726), f. 210.

18. Schiarimenti e Documenti, 1696-1768, Venezia, n. 94.

19. Հ. Գ. ԳՈՎԻԿԵԱՆ, Դրամսիլվանիոյ Հայոց Մետրապոլիտը, Վիեննա, 1896, էջ 115: ՍՈՆԿՈԹ Գ., Աշ. գծ., հտ. Գ. 1903, էջ 79:

20. ՍՈՆԿՈԹ Գ., Աշ. գծ., հտ. Ա. 1901, էջ 365:

ի Հայրապետութեան Սրբազան փափին Պէնէտիքոսի Երեքտասաներորդի, յետիստպոսութեան Դրանդիլանիոյ եւ Առաջնորդին մերոյ Տեառն Զօրկէր Գրիգորին, յԱրհիտիազօնութեան Հայոց Դրանդիլանիոյ եւ առաջին Բլէպանոսի Հայաքաղաքի Տեառն Մինասայ Թորոսեանց»²¹ :

Աւելի ստույգ տեղեկութիւններ ունինք 1729էն սկսեալ, երբ հոն կը հասնի Հ. Մանուէլ վարդապետ եւ տեղեակ կը պահէ նաեւ Մխիթար Աբրահայրը՝ Կերլայի անցողաբններու մասին :

Անշուշտ, Տէր Մինաս Թորոսեան լաւ ընդունելութիւն ըրած պիտի ըլլայ Հ. Մանուէլին, որ իր առաջին նամակներով իսկ արդէն հաճելի լուրեր կը հաղորդէ Մխիթար Աբրահայր : Իրմէ վը խնդրէ որ Տէր Մինասին նամակ մը դրէ. «Ոնդրեմ ի քէն, կը քրէ, զի զմի գիր ուղղէս դանձնարարական վասն իմ, այսինքն ողջունադիր առաքիցես ի ձեռն (sic) Տէր Մինասի, զի այժմ է «յաչս ամենից» եւ յոյժ տըրտմութեամբ զարմանայր ոչ առաքելոյդ առ նա զգիր սիրոյ եւն»²² :

Այս դարձեալ կը յանձնարարէ նման նամակ մը գրել. «զի եկն աստ ընդ Ստեփանոսի Վարդապետին որ է իւր քեռին եւ քաղում սէրս ցուցին ինձ անկեղծ սիրով. միայն թէ ամաչեցայ ընդ ասելն թէ արդեօք Գերյարդելին վասն է՞ր զիս այսքան մոռացաւ՝ որ ոչ արժան համարեցաւ զրելոյ առ իս զգիր ողջունի՝ որ ես սիրեմ եւ ջատագովեմ զձեր Մխարանութիւն, եւ որ ինչ չա՛հ իցէ դիպերոց կամ քաղաքիս՝ ես նախ վաճելին կամիմ. զոր օրինակ ասէ՛ Նա որդորեալ եմ Աղաչայ՝ Ալեքսանին տուրքն եւ այլ սոյնպիսիք»²³ :

Հ. Մանուէլ Վարդապետի այս պնդումին վրայ, գեղեցիկ նամակ մը կը ստանայ Տէր Մինաս Մխիթար Աբրայէն, որուն ինքն ալ յուզուած կը պատասխանէ կարճ նամակով մը. «Ոնդաղապարս սիրով եւ մեծաւ արթնութեամբ սրտիս՝ վերընկալայ զգրոյն առաքելաչնորհ քարտէզն զնուիրեալն եւ գիրծաղեալն (sic) առ իս՝ ... որոյ յաղաղա կորացեալ անձամբ զսմենախոնարհն առննձայեմ շնորհակալութիւն...»²⁴ :

Սակայն Տէր Մինաս այս առիթէն կ'օգտուի իր իշխանութեան ենթարկելու համար Հ. Մանուէլ վարդապետը : Արդարեւ, անմիջա-

21. Միւս երկու եղբայրութիւններն էին. «Եղբայրութիւն Սրբոյն Գրիգորի Լուսաւորչին. Յամի Տեառն 1729 Կ. Հայոց ՌՃՀԸ Ուրիսի ամսոյ 26» (ԳՈՎՐԻԿԵԱՆ, Գ2. գծ., էջ 61) : Եւ «Եղբայրութիւն Ամենասուրբ Երրորդութ. Յամի Տեառն 1729 Կ. Հայոց ՌՃՀԸ Օգոստոսի ամսոյ 20» (Ամդ, էջ 73) :

22. Հ. Մանուէլ Վարդապետ, Պաշտօնովէն, առ Մխիթար Աբրահայր, Վենետիկ, 1729 Հոկտ. 25 (Դիւան Ս. Ղազարի) :

23. Հ. Մանուէլ Վարդապետ, Պաշտօնովէն, առ Մխիթար Աբրահայր, Վենետիկ, 1730 Մարտ 3 (Դիւան Ս. Ղազարի) :

24. Տէր Մինաս Թորոսեան, Կերլայէն, առ Մխիթար Աբրահայր, Վենետիկ, 1730 Մայիս 27 (Դիւան Ս. Ղազարի) :

պէս կը յարէ. «Յետ սիրոյ ողջունիս զեկուցանեմ Գերապատութեանդ թէ զնոյն ներդրութիւն սիրոյ զոր մատուցի Հ. Մանուէլին՝ ոչ եղեւ կեղծամբ, այլ ճշմարիտ ներգործութեամբ : ... Բայց միայն զայս աղերսեմ ի Գերապատութենէդ զի նոյն ինքն Հ. Մանուէլն մի համարձակիցի ձեռն արկանել առ այնս որք պահանջին իրաւասութեան մերում... իրաւասութիւն ժողովրդեանն երկրիս աթմիկ մեղ է յանձնեալ... եւ թէ ի Պաշտօնովէն պատահեցի իր իմն... Թարց զիտութեան մերոյ մի՛ արասցէ, այլ հաճեցի մեղ եւս ծանուցանել»²⁵ :

Մխիթար Աբրահայր այս նոր կարգադրութիւնը կ'իմացնէ Հ. Մանուէլ Վրդ.ին՝ 1730 Յուլիս 22 նամակով՝ որ ձեռքերնիս հասած է : Հ. Մանուէլ չի վերդովիր այս սեղմումին համար, մանաւանդ թէ լացատրելով Տէր Մինասին միտքը՝ կ'աւելցնէ. «Եւ վասն Տէր Մինասին յորդորմանս եւ գրելոյդ առ նա զգիրն՝ յոյժ ուրախ եմ եւ ոչ ստրջանամ, զի արնքան սիրով կ'արաւկեալ է այժմ առ իս որ ոչ կարեմ պատմել եւ վասն իրաւասութեանցն զոր ծանուցեալ է, շնորհակալ եմ ի Տէր որ յոյժ հաւատաս ինձ՝ որ ես ոչ ունիմ փափաք ներխառնել զիս ներ աթմիսեաց, միայն թէ զիւր մեծութիւնն առիթ դռանելոյ սակս, որ Տեառնդ ծանուցանէ, գրեալ է զնոյն, եւ ոչ թէ ըստ գրելոյ իւրոյ եւն»²⁶ :

Ինչպէս կը տեսնուի, Տէր Մինաս Թորոսեան Հ. Մանուէլ Վրդ.ին հետ աւելի հեշտութեամբ կրնար գործել՝ քան Տէր Մինաս Պարոն-կանին հետ, շնորհիւ առաջինին քարեհամբոյր նկարագրին :

Շատ չանցած, եւ այս անգամ թերեւս զրպարտաբար, Տէր Մինաս Թորոսեանի քարոյականի մասին ինչ ինչ ամբաստանութիւններ կը ըսուին, որոնց համար կը հեռացուի իր պաշտօնէն²⁷ :

Թէ ուր հեռացած ըլլայ՝ չենք գիտեր : Մխիթար Աբրահայր առ Ստեփանեան Տէր Ստեփանոս նամակին հետեւեալ «յետ գրութեան» կը թելադրէ՝ որ թերեւս մինչեւ Հոռոմ գացած ըլլայ. «Իսկ որքան առ այն, զոր գրեալ էիք եւ խնդրեալ ի մէնջ՝ զի յորժամ եղբայրն ձեր

25. Ամդ :

26. Հ. Մանուէլ Վարդապետ, Պաշտօնովէն, առ Մխիթար Աբրահայր, Վենետիկ, 1730 Սեպտ. 11 (Դիւան Ս. Ղազարի) :

27. Խառնելէն լեզուով դրած է այս լուրերու մասին. «Կերլայէն տխուր լուր մ'ուրիմ, որ այդ տեղւոյն «Երկամօրուս» Մինասը բռնուեր է այրի կնոջ մը հետ, որ պարտաւորուած ըլլալով աքորուիլ քաղաքէն՝ յայտնած ըլլայ որ նոյն քահանան արդէն, հինգ տարի է զմեր, միւս երդուեալ տղնուականներու ընտանեաց հետ յարաբերութիւններ ունեցեր է» [Տէր Մինաս Պարոնեան, Վիեննայէն, առ Մխիթար Աբրահայր, Վենետիկ, 1730 Սեպտ. 16 (Դիւան Ս. Ղազարի)] : Աւելի հակիրճ բացատրութիւն ունի Հ. Մանուէլ Վարդապետ. «անկեալ է ի մեծութենէն» : Նամակ Հ. Մանուէլ Վարդապետի, Պաշտօնովէն, առ Մխիթար Աբրահայր, Վենետիկ, 1730 Հոկտ. 18 (Դիւան Ս. Ղազարի) :

Տէր Մինաս դայցէ Հոռոմայու, ընդունիցեմք զնա եւ ուսուցանիցեմք նմա հայերէն լաւ գրել եւ խօսիլ. ծանիք զի յորժամ Աստուծով դայցէ նա աստ՝ մեք խօսիմք ընդ նմա եւ տեղեկանամք զկամաց նորին...»²⁸:

Տէր Մինաս տակաւին բացակայ էր Կերլայէն կամ էջր վերստացած իր պաշտօնը՝ 1731ի Հոկտ. 27ին, ինչպէս կրնանք հետեւցնել Հ. Մանուէլ վարդապետի նոյն թուակիր նամակէն, ուր չենք հանդիպիր Տէր Մինասի անունին՝ Տէր Ղուկասի եւ Տէր Թորոսի անուններու կողքին²⁹:

Կերլա քաղաքի 1723-1724ին յառուցուած մատրան մէկ դրան վրայ կը կարդանք 1732 Յուլիս 16 թուակիր արձանագրութիւնը. «... Յր. Տր. Մինս. Թրոս», այն է Յարգելի Տէր Մինաս Թորոսեանի անունը. կարելի է ենթադրել, թէ եւ առանց բաւական փաստի, թէ այդ թուականին Կերլա գտնուած ըլլայ³⁰:

Իր վերադարձին համար աւելի ստոյգ թուական մը կրնանք նշել կատել 25 Սեպտեմբերը, քանի որ «Ահա այսօր էկա ի Սիպինէն. ինչ որ գրեցիր Յարգելութիւնդ առ իս՝ զամենայն ինչ կատարել(ց)ի Աստուծոյ ողորմութեամբ»³¹: Տեղեակ չենք, սակայն, այդ նամակին պարունակութեան, նամակը ձեռքերնիս հասած չըլլալով:

Վերադարձէն ետք, Հ. Մանուէլ վարդապետ կրկին կը թախանձէ Մխիթար Աբբազօր, որ բարեհաճի Տէր Մինասին երկու տող գրել. «Եթէ ոչ լիցի ձանձրութիւն՝ գրեցես նմա զգիր սիրոյ եւ ծանուցես նմա զսէրն իմ», որովհետեւ, կ'ըսէ, «այժմ յոյժ սէր ունի»³²:

Սակայն սէրը չէ կարծել թէ Տէր Մինասի բնաւորութիւնը փոխուած ըլլար: Արդարեւ, սուտ լուր մը հաներ էր Հ. Մանուէլ վարդապետի մասին, իբրեւ թէ Արպա Ծովիայի Առաջնորդ եպիսկոպոսը զայրացած ըլլար Հ. Մանուէլին դէմ՝ Հայերու կողմէ իրեն նկատմամբ նիւթուած զրպարտութիւններուն պատճառով, որով եպիսկոպոսը հանրային պատիժ մըն ալ սահմանած ըլլար Հ. Մանուէլ վարդապետին: Տէր Մինաս կը հաստատէր նաեւ՝ թէ Եպիսկոպոսը իր միջնորդութեամբ վերցուցած ըլլար այդ պատիժը, եւ Հ. Մանուէլ ներումի արժանացած³³:

28. Մխիթար Աբբազայր, Վենետիկէն, առ Տէր Ստեփանոս Ստեփաննոսեան, Ստաւֆալտոնիա, 1731 Յուլիս 14 (Նամակնի Մխ. Աբ. Թ. 417):

29. Հ. Մանուէլ վարդապետ, Պաշտօնական, առ Մխիթար Աբբազայր, Վենետիկ, 1731 Հոկտ. 27 (Դիւան Ս. Ղազարի):

30. ՍՈՂԱՌՔ Գ., Եջ. գծ., հտ. Բ. 1901, էջ 416:

31. Տէր Մինաս Թորոսեան, Կերլայէն, առ Հ. Մանուէլ վրդ., Պաշտօնով, 1732 Սեպտ. 25 (Դիւան Ս. Ղազարի):

32. Հ. Մանուէլ վարդապետ, Պաշտօնական, առ Մխիթար Աբբազայր, Վենետիկ, 1732 Հոկտ. 24 եւ 28 (Դիւան Ս. Ղազարի):

33. Տես ծանօթութիւն Թ. 31:

Ամէն պարագայի Հ. Մանուէլ վարդապետը՝ Տէր Մինասի ցոյց տուած արտաքին վարմունքէն դուրս էր³⁴: Եպիսկոպոսն ալ գնահատած ու «փրկականուչ» պաշտօնին վրայ վերահաստատած էր զինքը³⁵: Այլապէս չատ պակասաւոր են մեր լուրերը եւ տեղեկութիւնները այս շրջանի մասին (1734ի Ապրիլէն Օգոստոս), նոյն ատենուան պատերազմական դէպքերուն պատճառով³⁶:

Ի հեճուկս իր դժուար նկարագրին՝ Տէր Մինաս համակրանքի զգացումներ կը տածէ Մխիթար Աբբազօր եւ անոր Մենաստանին հանդէպ, որուն ի նպաստ կը ջանայ մինչեւ իսկ բարեբարներ դռնել ազգայիններու միջեւ: Այդ բարեգործական ձեռնարկներուն փոխարէն Հ. Մանուէլ անդադար կը խնդրէ շնորհակալական նամակներ Միաբանութեան Հիմնադրէն³⁷:

Հ. Մանուէլի հանդէպ ալ, խորքին մէջ, բարեկամական զգացումներ ունի: Իր կարգին՝ Հ. Մանուէլ եւս, յարմար առիթներով, «Կերլացի Մինասին ջերմ բարեւները կը փութայ հաղորդել Մխիթար Աբբազօր: «Կերլացի» մակդիրով կը զանազանէր Հ. Մանուէլ վարդապետ Տէր Մինաս Թորոսեանը՝ Խնկանոսեան «Վերապատուելի Տէր Մինաս Վարդապետ»էն, որ Պրոպագանդայի աշակերտներէն էր³⁸:

Զարմանալու չէ, ուրեմն, որ Հ. Մանուէլ ջատագովականը հիւսէր Տէր Մինասին՝ Մխիթար Աբբազօր մօտ, գրելով հետեւեալը. «Կերլայու Տէր Մինասին մի գիր՝ շնորհակալութեան, որպէս թէ նորին հաճութեամբ եղեւ անալն իմ աստ եւ սիրով ընկալաւ զիս ի ներքոյ նախախնամութեան իւրոյ. զի է աստ որպէս զվիզիթաթոր եւ արհաւիրագոնուա, եւ սիրական՝ ընդ աստ եղեալ եպիսկոպոսին եւ է ջատագով միջոց աննախանձ մերոյս հասարակութեան»³⁹:

Նոյն ընտանութիւնը մնացել է երկուքին միջեւ՝ մինչեւ Հ. Մանուէլի քաժանման օրերը: Այդ քաժանման արթիւ Տէր Մինաս ինքնուրոյն նամակ մը ուղղած է Մխիթար Աբբազօր. «Գերայրգելի եւ բազմապատիւ Տէր իմ, Տէր, եւ հոգեւոր Հայր իմ Քրիստոս: Մատուցանեմ սիրով ողջոյն իբրեւ գրկախառն համբուրիւ, եւ աղաչեմ

34. Հ. Մանուէլ վարդապետ, Պաշտօնական, առ Մխիթար Աբբազայր, Վենետիկ, 1734 Մայիս 21 (Դիւան Ս. Ղազարի):

35. Հ. Մանուէլ վարդապետ, Պաշտօնական, առ Մխիթար Աբբազայր, Վենետիկ, 1734 Մայիս 26 (Դիւան Ս. Ղազարի):

36. Տես Ե. Թիւ 34, 35:

37. Հ. Մանուէլ վարդապետ, Պաշտօնական, առ Մխիթար Աբբազայր, Վենետիկ, 1734 Յուլիս 5 (Դիւան Ս. Ղազարի):

38. Հ. Մանուէլ վարդապետ, Պաշտօնական, առ Մխիթար Աբբազայր, Վենետիկ, 1734 Նոյ. 17 (Դիւան Ս. Ղազարի):

39. Հ. Մանուէլ վարդապետ, Պաշտօնական, առ Մխիթար Աբբազայր, Վենետիկ, 1735 Փետր. 25 (Դիւան Ս. Ղազարի):

ի Տեառնէ կեցուցչէն, որպէս զի տացէ գերյարգելութեանդ ձերուս գերկար կեանս, եւ զբազում ժամանակս, ի պարծանս մերազնեայց, եւ ի ուրախութիւն մեզ»⁴⁰։

Յետ կարգ մը մաղթանքներու, այսպէս կը շարունակէ. «Ես միշտ ջատագով եմ շնորհազարդ կացութեան քում, թէ որպէս ջան եղեալ վասն ցրուեալ հօտին սուրբ Հօրն մերոյ Լուսաւորչին, այդքան աշխատանք ժողովել զայդքան անձինս, առ ի ուսուցանել մեծադոյն ջանիւ, զի լինիցին ջատագով արքայ Մօր մերոյ եկեղեցւոյ ճշմարտութեանն...»⁴¹։

Ապա կ'անցնի Հ. Մանուէլ վարդապետի անձին եւ գործունէութեան. «Նա եւ աստ առաքեալ վերապատուելի Հայր էմմանուէլին կենցաղավարութիւնն եւ սէրն, որ առնէ ընդ ամենեւեան, զի մերձ է վեց տարի, որ Պաշփալովն է, եւ ոչ ուրեք վամ ումեք ձանձրութիւն տուեալ է»⁴²։

Յետոյ կ'անդրադառնայ ինքն իր մասին. «... աստ եղեալ Մաճրի Եպիսկոպոսն միշտ զիս առաջարկէ, եւ ինձ հաւատարմապէս հաւատայ։ Վասն որոյ տարին մի անգամ, վամ երկու տարին մի անգամ կու հրամայէ առ ի վիզիթաճիա առնել, թէ՛ աստ ի մեր քաղաքն, թէ՛ ի Պաշփալովն, եւ թէ ի Ճուրճովն, վասն լինութեան ուղղափառ հաւատոյ, եւ այլ ուրիշ կացից ժողովրդեանն։ Եւ եղեւ զի երկու եւ երեք անգամ հանդիպեցայ ի Պաշփալովն, եւ լուեալ եմ ի բերանոյ ամենայնից ժողովրդեանն ի մեծամեծաց եւ ի փոքունց զգոհութիւնս Հայր էմմանուէլին՝ թէ՛ ուսուցանել, թէ՛ քրիստոնէական վարդապետութիւնն, թէ՛ հիւանդաց տեսութիւնն. ոչ միայն ի դրունս իշխանաց, այլ առաւել ի դրունս աղքատաց, որպէս զթած հայր»⁴³։

Կը շարունակէ՝ մասնաւորապէս զգացնել ջանալով իր միջամտութեան կարեւորութիւնը Հ. Մանուէլի պարագային եւ անոր ապագային նկատմամբ. «Եւ այժմ, որ կամի ելանել աստի եւ գալ աթոռ, ըստ հրամանի գեր. Յ. Զ. ամենեքեան տրամեալ են, մանաւանդ աղքատքն։ Բայց ոչ է այլ հնար, միայն գնալոյ պիտոյ է, վասն սուրբ հնազանդութեանն։ Ես բազմաց եկելոց աստ ի Կեպլա խնդրեալ էի թէ առաքիցէք աստ ի մեր՝ քաղաքն Հայր էմմանուէլին, եւ եղեւ մինչ մերձեցաւ չուսման առ ի վանքն, եկն աստ առ մեզ, եւ ոչ թողի զնա մինչեւ մէկ ամիս, եւ ըստ վարեաց իմոց ցոյց ետու նմա զհնա-

դոյն սէրն իմ։ Նա եւ յարգութեամբ մեծաւ առաքեցաք զնա ի Պաշփալովն, զի անտի յետ Զատիկին Հայոց յարմար գնացող լինիցի դէպ ի Պէջն, տարցեն զնա խաղաղութեամբ։ Արդ՝ վերջացնելով զխօսս իմ, տամ եւ ես իմ հոգւովս զվկայութիւն վասն Հայր էմմանուէլին թէ է միամիտ եւ փորձատանտէր, եւ մարդասէր, եւ երկիւղած Աստուծոյ։ Վասն որոյ, ահա ստորագրեմ իմով ձեռնագրովն, զի լինիցի հաստատ վկայութիւնն. նաեւ կնքեմ, զի տեսանողացող հաճոյ լիցի։ Եւ այսու մնամ Գերյարգելի Հօրդ Ժմոյ նուաստ ծառայ Տէր Միքայ Թորոսեան. եւ Բլէյսանոս Հայոց քաղաքի եւ ընդ բո(լո)ր Դրանդիւմանիան. արհիտիադօն եւ Բրօթօնօդարիւս առաքեալան»⁴⁴։

Կարելի է հաստատել որ Տէր Մինաս օգտակար եղած է Հ. Մանուէլին, մանաւանդ թրանսիլանիայէն հեռանալու շրջանին, թէ՛ բարոյապէս եւ թէ՛ նիւթապէս. «Կեպլայ զնացի, իը գրէ վերջին նամակներէն մէկուն մէջ, տանելով ընդ իս զոմանս ի գրեանցս եւ վաճառեցի զբազումս։ Բայց ոչ կարեմ գրով հասկացնել զմեծադոյն սէրն Տէր Մինաս աւագ իրիցուն, որ ի Կեպլայն արար ինձ։ Թարց իմոյ գիտութեան՝ գնացեալ է ի դատատանատունն եւ խօսեցեալ է ընդ ծերոց թէ Ո՛վ Աղաչայք, այս պատուելի ծեր Մանուէլն, գիտէք ամէնքդ, որ վանք պիտի որ գնայ, ամենայն ամօթ է մեզ դատարկաճեռն առաքել։ Եւ այլ քանիւր յորդորելով գնոսս, խոստացեալ են թէ քաղաքի հասարակ սնտուկէն 10 ոսկի տամք՝ եւ ետուն։ Յետոյ սովորութիւն է բնակից Աղաչայից տունն գնալ «բարեւ մնայ» առնելու. ինք ասեր է թէ ես ահա երկու ոսկի շնորհեմ վանքին, եւ նոքա եւս մի ըստ միոյն ասեր ան թէ մեք եւս մի մի ոսկի կու շնորհեմք։ Վերջապէս, ընդ ամէնն աւելի քան զթէ ոսկի շնորհեցին, նոյն Տէր Մինասին երկու ոսկովն եւս»⁴⁵։

Տէր Մինաս Թորոսեան վախճանած է 3 Յունուար 1760ին։ Մեր նպատակէն դուրս ըլլալով ներկայիս Տէր Մինասի կեանքին յետագայ տարիներով զբաղիլ, կանդ կ'առնենք այստեղ, յուսալով որ առիթ ունենանք յաջորդաբար աւելի ընդարձակօրէն խօսիլ իր կեանքին եւ գործունէութեան մասին։

Ամփոփելով ցարդ ըստաճները, կը փափաքինք ուշադրութեան յանձնել Տէր Մինաս Թորոսեանի ձեռք բերած քարոյական եւ նիւթական նուաճումները, հակառակ իր կեանքը վրդովող անհամաձայնութիւններուն եւ դժուարութիւններուն։

Եկեղեցական եւ քաղաքական իշխանութիւնները՝ նկատած իր աշխատանքները՝ «առաքելական նուիրակ»ի եւ «աւագերէց»ի տիտղոսները կու տան իրեն, որոնց ինք այնքան բուռն փափաքած էր։

44. Ամդ, էջ 227-228։

45. Հ. Մանուէլ Վարդապետ, Պաշփալովն, առ Միքայ Թորոսեան, Վենետիկ, 1735 Ապրիլ 20 (Դիւան Ս. Ղազարի)։

40. Տէր Մինաս Թորոսեան, Կերլայէն, առ Միքայ Թորոսեան, Վենետիկ, 1735 Մարտ 30։

41. Ամդ, էջ 227։

42. Ամդ, էջ 227։

43. Ամդ, էջ 227։

իսկ իր քաղաքակրթները կ'ընծայեն իրեն բարձր պնակատանք մը, պլուրալ հանած շինարարական գործերուն ի տես. ուստի իր անունն ալ կը քանդակեն Կերլայի քանի մը յուշարձաններուն վրայ, որոնք մինչեւ այսօր մնացած են իբր մշտնջենական յիշատակ⁴⁶:

46. Հմմտ. ՍՈՆԿՈԹ Բ., 62. գծ., հտ. Ա. էջ 301, 302, 365, հտ. Բ. էջ 229, 416, 419:

ՏԵՐ ՄԻՆԱՍ ՊԱՐՈՆԵԱՆ

(1694–1770)

Տէր Մինաս Պարոնեան ալ եղած է այն հոգեւորականներէն, որոնք Հ. Մանուէլ վարդապետի Թրանսիլանիայէն բացակայութեան շրջանին, գործած են Մխիթար Աբբազօր բացած Առաքելութեան մէջ: Պարոնեան եղած է մանաւանդ Հ. Մանուէլ վրդ.ին յոջորդը, ինչպէս տեսած ենք նախապէս, Պաշտօնակի մէջ¹:

Մխիթար Աբբազօր զինք ճանչցած ըլլալու է երբ դեռ Ուրբանեան վարժարանի աշակերտ էր եւ միասին պտոյտ մ'ալ ըրած Հռոմի մէջ:

«Այս շաբաթու հինգշաբթի յաւուր, իր կարգանք Մխիթար Աբբազօր Հ. Եղիա վարդապետին դրած նամակին մէջ, շրջեցաւ ի եօթն եկեղեցին. եւ այս ոչ թէ միայն՝ այլ ընդ Փրօփականատացոյ. զի նոքին եւս հանդերձ մեծաւորօք, եւ ամենայն միաբանօք հանդերձ երգով, այսինքն ի ճանապարհն երգելով շրջեցան...: Եւ զի մեծաւորք կառուցայով շրջին, եւ աշակերտք ոտով, ուստի նաեւ մեք կառուցայով (զոր ոմն լաթին եպիսկոպոս՝ քարեկամ ինձ՝ շնորհաց) շրջեցաւ եւ մերթ զմինն ի մերայնոց, այսինքն հայ տղոց, եւ մերթ զմինն ի կառա մեր նստուցաք, եւ լի եղեն ուրախութեամբ... եւ զի փառաւորեցան առաջի ընկերացն»²:

Տէր Մինաս նամակ մըն ալ գրած է Մխիթար Աբբազօր՝ սարկաւադ ձեռնադրուելէն քանի մը օր առաջ, 1719 Դեկտ. 22ին, որուն ան պատասխանած է շնորհաւորական նամակով մը³: Կուսակրօն քա-

1. «Բազմավէպ», ձև (1977), էջ 162–164:

2. Մխիթար Աբբազօր, Հռոմէն, առ Հ. Եղիա վրդ., Վենետիկ, 1718 Նոյ. 5 (Նամականի Մխ. Աբ., Բ. 52):

3. Նամակ Մխիթար Աբբազօր, Վենետիկէն, առ Տէր Մինաս Պարոնեան, Հռոմ, 1720 Յունուար 6 (Նամականի Մխ. Աբ., Բ. 84):

հանայ կը ձեռնադրուէր 31 Մարտ 1720ին: Տարիքը ձեռնադրութեան համար քաւարար ըլլալով, հարկ եղած է մասնաւոր արտօնութիւն խնդրել⁴:

Ձեռնադրութեան յաջորդող նամակներու շարք մը ունինք իրմէ, գրուած Մխիթար Աբբազօր, որուն կը յայտնէ իր մտահոգութիւնները իր ծննդավայրին՝ Պորոյ եկեղեցական խնդիրներուն մասին: Ոչ մէկ խօսք Թրանսիլանիոյ նկատմամբ⁵:

Տէր Մինասին յանձնուած քարոզչական պաշտօնավարութիւնը՝ Թրանսիլանիոյ մէջ, պայմանաւորուած էր որոշ պարագաներէ: Տէր Մինաս Թրանսիլանիա պիտի ղրկուէր միայն այն պարագային՝ երբ Լեհաստանի Լվովի Քահանայապետական Հայ վարժարանէն չգտնուէր հայերէն եւ լատիներէն գիտցող թեկնածու մը⁶: Հաւանաբար Թրանսիլանիոյ Կերլա քաղաքի Հայերու դիմումին վրայ է որ Հռոմ Տէր Մինասը այդ պաշտօնին վ'որոշէ⁷:

Պարոնեան հաղիւ կ'իմանայ իր առաջման լուրը, անմիջապէս հարկաւոր պատրաստութիւնները կը տեսնէ, մանաւանդ օգտակար դիրքերու հաւաքումով: Իր մեծաւորներէն կը խնդրէ իմաստասիրական, աստուածաբանական, դաւանաբանական, ջատագովական, քրիստոնէականի ուսուցման, ծիսական եւ այլ հոգեւոր դիրքեր՝ շուրջ 45 հատոր⁸: Բաւական թիւով դիրքեր ալ կ'ուզէ Վենետիկէն, շուրջ 13 հատոր⁹:

Կը տեղեկանանք Մխիթար Աբբազօր մէկ նամակէն՝ թէ հետը կը տանէր «Ղալաթացի Թարգմաղչու տղան»¹⁰, որու անունը Պետրոս էր¹¹:

Տէր Մինաս իր ճամբու ընթացքին, Հռոմէն մինչեւ Թրանսիլանիա, քանի մը օր Վենետիկ անցուցած ըլլալու է եւ հանդիպած Մխիթար Աբբազօր, ինչպէս կ'իմանանք Հ. Մանուէլ վարդապետի հաղորդածներէն: Այդ առթիւ յաջորդած է ձեռք ձգել, որ Հ. Մանուէլ վարդապետ կարենար քանի մը ամիս եւս մնալ Թրանսիլան-

4. AP, ACTA, v. 91 (1721), f. 104, n. 10.

5. Հմմտ. Տէր Մինաս Պարոնեանի նամակները, Հռոմէն, առ Մխիթար Աբբազօր, Վենետիկ, 1721 Մայիս 21, 31, Հոկտ. 11, Նոյ. 8, 29 (Դիւան Ս. Ղաղարի):

6. AP, ACTA, v. 91 (1721), f. 16, n. 30.

7. AP, ACTA, v. 91 (1721), f. 162, n. 35, f. 491, n. 22.

8. AP, SOCG, v. 633 (1722), f. 58.

9. AP, SOCG, v. 634 (1722), f. 292.

10. Մխիթար Աբբազօր Վենետիկէն, առ Հ. Պողոս վրդ. Պոլիս, 1722 Օգոստոս 30 (Նամականի Մխ. Աբ., Բ. 147):

11. Այս պատահի մասին նոյնպէս գրած էր Հ. Պողոս վրդ. թէ զայն ոմն Ղալաթացի Պետրոս անուն, որոյ ծնողի անունն է Մահու Օղլու Հաճի Յակօբ Թարգմաղչու եւ մեզ բարեկամ: Հ. Պողոս վրդ., Պոլիսէն, առ Մխիթար Աբբազօր, Վենետիկ, 1721 Մայիս 18 (Դիւան Ս. Ղաղարի):

նիս, մինչև որ առաքելական կեանքի վերաբերեալ տուեալները լրիւ տառնալէր: «Բայց ես, անկեալ զպարանոցաւն Աբրահայր, — պատմած է Հ. Մանուէլ վարդապետին —, ասացի. խնդրեմ որ այս ամ եւս թոյլ տացես զմեզնիս նորին»: Եւ ինքն ուրախ դիմօք ծիծաղելով ասաց. «Արա՛ ըստ խոհեմութեան քու: Եւ այսպէս բաժանեցաք ի միմեանց»¹²:

Հանդիսաւոր եղած ըլլալու էր Տ. Մինասի ընդունելութիւնը Պելկրատի մէջ, Հ. Մանուէլ վարդապետի նկարագրութեան համաձայն, ուր «ձէնէրալ տեղւոյս եկն եւ ի պատճառս նորին ամենայն թաղաւորք եւ ի իշխանք պաւստոս... Նաեւ վարդապետ(ս)ն Կէտլաւոց Տէր Մինասին եկեղեցականին (sic), ընդ Պիրովին, եւ ընդ այլ ծերոց, այլ եւ առնալէս ի Պաշտաւովու իշխանք, ձործովու... եւ վարդապետն մատուցանէ զգիրն յանձնարարական՝ որ ի Կարդինալ Չաքիէն եւ ի Նունցէն... եւ Կուէննաթորն մինչեւ 9 օր ի փալացի իւրում պահէ, ննջէ ի նմին եւ խօսակցեալ բազում: Եւ վերջապէս, զոր ոչ հաւատարի՛ն՝ եթէ իցէ ի միջի Հայոց լաւ ուղղափառ, բայց միայն Շիկահերն այն (Տէր Մինաս Թորոսեան), այժմ հազիւ ճանաչեալ՝ թէ զոյ իմաստութիւն ի մէջ Ազգիս. և այսպէս պատուեալ առաքենդն»¹³:

Պարոնեան ալ, իր կողմէն լաւ տրամադրութիւն ցոյց տալու եւ կ'ախորժէր նման հիւրասիրութիւններէ:

«Կերլայի մօտ — կը կարգանք Հ. Մանուէլ վրդ.ին նամակին մէջ — գիրտէ Մօնսենէօր (Թովնան Եպիսկոպոսը) Տէժին Վանոց (փրանկիսկեան վանք) ատնի օրն էր: Հրաւիրեցին զինքն, զի զնասցէ անդ, եւ պնաց: Եւ յետ պատարագացն ի սեղանս կրօնաւորաց բազմեցուցեալ՝ զտանեցեալ էր անդ մեծամեծք ճիւղլումն տեղւոյն, որ սոքա թաղաւորք յարանուանին: Զրոյց ինչ հարցեալ են սմա որպէս ըզփորձ, եւ սա յամենայնէ սրտէ փ բարբառս լաթինի խօսեալ, եւ ըզբնաւս զարմացուցեալ: Եւ Կուէննաթօր թաղաւորի եղբայրն անդ է եղեալ եւ պսա գովեալ եւն.»¹⁴:

Մեր նպատակէն դուրս ըլլալով արձանագրել այստեղ Պարոնեանի բոլոր շարժումները, յիշենք, սակայն որ տակաւին Հ. Մանուէլ վարդապետ իր քովէն չհեռացած, ձուրձով ալ գացած է անդամ մը, եկեղեցւոյ օրհնութեան համար, 1722ի Հոկտեմբերին¹⁵:

12. Հ. Մանուէլ վրդ., Պաշտաւովէն, առ Միսիթար Աբրահայր, Վենետիկ, 1722 Հոկտ. 27 (Դիւան Ս. Ղազարի):

13. Անդ:

14. Հ. Մանուէլ վրդ., Պաշտաւովէն, առ Միսիթար Աբրահայր, Վենետիկ, 1722 Յուլիս 30. տես «Բազմավէպ», ՃԼԵ (1977), էջ 163:

15. Հ. Մանուէլ վրդ., Պաշտաւովէն, առ Միսիթար Աբրահայր, Վենետիկ, 1722 Հոկտ. 27. տես «Բազմավէպ», ՃԼԵ (1977), էջ 163: ՍՈՆԿՈԹ Ք., Կաթողիկէ Հայոց Եկեղեցի, Armenia XVIII, (1904), էջ 228-236 (Հունդարեմէն):

Մինչև որ Հ. Մանուէլ վարդապետ Պաշտաւով կը գտնուէր, այսինքն մինչև 1723 տարուան Մայիս ամիսը, Պարոնեան վարդապետը ոչ մէկ նեղութիւն չէ կրած: Սակայն այդ թուականին կը յաջորդեն նեղութեան տարիներ, մինչև որ վերջնականօրէն կը հեռանայ Թրանսիլլանիոյ սահմաններէն:

Ամէնէն առաջ ինչպիսի վարդապետին իմացուցած է անհամաձայնութեան լուրը իր եւ տեղւոյն ժողովրդապետին՝ Տէր Մինաս Թորոսեանի միջեւ: ինչպիսի վարդապետն ալ, իր վարդին, առած լուրը կը հաղորդէ, 17 Յուլիս թուականին, Հոռմի Ս. Ժողովին, խընդրին հակառակէտերը ամփոփելով այսպէս. «Նոյն ժողովրդապետը (Տէր Մինաս Թորոսեան), որ առաքեալին չափ ուսեալ չէ, կ'ուզէ տեղապահի պաշտօնին հասնիլ, ինչ որ՝ ըստ ինքեան՝ ուսեալ առաքեալին կ'իյնայ եւ ինքը պէտք է նախընտրուի ինչպիսի ունենայ»: Ապա ճար մը մատնանչելով՝ կը շարունակէ. «ասիկա զիւրաւ լուծում կը գտնէր լատին Տեղապահին կողմէն, որ սակայն աւելի ժողովրդապետին կողմը կը քաննէ քան միախնային կողմը: Ուստի հարկաւոր է որ Հոռմ միջամտէ խնդրին մէջ, որպէսզի հարցերը լուծուին»¹⁶:

Անկախաբար ինչպիսի վարդապետի գրած նամակէն՝ Պարոնեան, ինքն ալ, անձամբ կը գրէ Հոռմի Մեծաւորներուն 20 Օգոստոս թուականին նամակով: Նամակին մէջ կը նկարագրէ՝ ժողովրդապետ Տէր Մինաս Թորոսեանի վարմունքը եւ առթած գաղթականութիւնները, թէ «Շիկամօրուս քահանայ մը, որ չի դադրիր զիս զըրպարտեթ... իր շարունակեամբ եւ սուտերով ժողովուրդին առջեւ՝ միմիայն տիրապետելու մարմարջէն մղուած. սակայն ինքը մէկն է՝ որ բան մը սորված չէ, բան չի գիտեր ու կ'անարգէ եւ անարգել կու տայ իմ ազգարարութիւններս ուրիշներուն...»: Ինքը թէպէտ սիրով կը տանի այնպիսի արհամարհանքներու, «միայն թէ չտուժէ տկամած հոգեւոր զարգացումը. գիտնալու էք նաեւ, կը գրէ, որ Հոռմ զարացիները բնաւ չեն սիրեր օտարները. հետեւաբար ես այստեղ ոչ մէկ նպատակ կ'ընամ գտնել»: Իր կողմէն հետեւեալ թելադրանքով կը վերջացնէ տողերը. «Ս. Ժողովը թող տեղապահ առաջնորդ մը դրկէ՝ որուն ամէնքը հնազանդին, եւ այսպէսով՝ տեղւոյն ժողովուրդը կ'ընայ զարգանալ»: Այսպէս «պիտի մնամ հոս եւ պիտի ապրիմ դառն ցաւերով»¹⁷:

Պարոնեան՝ նման բացատրութիւններով՝ ինչպիսի վրդ.ին ալ նկարագրած է զէպքերուն ուղեւժովը: «Ոչ պոյ աստ կարգ եւ օրէնք: Ես մէկ կերպիւ խրատեմ, Տէր Մինաս հակառակ կու փրատէ վասն նա-

16. AP, SOCG, v. 641 (1723), f. 67.

17. AP, SOCG, v. 641 (1723), f. 68.

խանձութեան ներկայութեան իմոյ աստ: Յամենայն ժամանակ կռիւ եւ խռովութիւն կու անեն: Ոչ կարեմ զամենայն բանս ծանուցանել: Միայն աղաչեմ զԱստուած զի համբերութիւն տացէ ինձ»¹⁸:

Այս անհամաձայնութեան լուրը հասնելով Ս. Ժողովի վարչութեան՝ նախ իրաւունք կու տան Տէր Մինաս Պարոնեանին¹⁹, ապա՝ կայն իրաւասական տեսակէտէն խոհեմ կը դատեն թողուլ Վիեննայի Նուիրակին ու Թրանսիլլանիոյ Եպիսկոպոսին կարգադրութիւններուն՝ Տէր Մինաս Պարոնեանի պաշտօնին սահմանումը²⁰:

Յամենայն դէպս Պարոնեան կը շարունակէ Հռոմ դրկել իր տեղեկութիւնները: 1723 տարուան վերջին նամակին մէջ, 24 Դեկտեմբերին, կը գրէր. «Տէր Մինաս թաթարաւոր է տալիսութեամբ. չափէն աւելի հպարտ է, յափշտակիչ, վայրագ ու դաժակեցուցիչ. կ'արհամարհէ քահանաները՝ նոյնիսկ եկեղեցւոյ մէջ...»: Այս կացութեան դիմաց՝ Պարոնեան կը ստատէ եռանդուն առաջնորդի մը, որ կարգադրութիւններ ընէ²¹:

Ս. Ժողովի մեծաւորները թէեւ նկատի կ'առնեն Պարոնեանի թելադրութիւնները, բայց առաջնորդի մը առաջնութիւնն առաջ՝ աւելի տեղեկութիւն հաւաքել կը փորձեն. որով 1724 Ապրիլ 1 թուակիր նամակով՝ Վիեննայի Նուիրակին այս դիտաւորութեամբ հարցումներ կ'ուղղեն²²:

Նոյն օրուան թուականով՝ Տէր Մինաս Պարոնեանին ալ նամակ մը կը դրկուի, զինք վստահեցնելու համար՝ թէ հազիւ նոր՝ Քահանայապետի ընտրութեան Ժողովը փակուի, հետամուտ պիտի ըլլան լուծելու իր խնդիրը²³:

Պարոնեան իր նամակագրութիւնը կը շարունակէ Մխիթար Աբրահոյ հետ եւ անընդհատ տեղեկակ կը պահէ զինք ամէն քանի մասին, իբրեւ հոգեւոր հայր մը: Մարտ 19 թուակիրով, ձառոց մը կը խնդրէ Մխիթար Աբրահայէն, որ պատասխանելով նամակին՝ սա խօսքերը ունի վերջաւորութեան. «Լուայ ի գրոյդ՝ զի բազում վիշտս կրես. բայց զիտեա, զի նաև զմեծ վարձս ընդունելոց ես ի Տեառնէ»²⁴:

18. Տէր Մինաս Պարոնեան, Պաշտօնովէն, առ Խաչատուր վարդապետ, Վենետիկ, 1723 Սեպտ. 19 (Դիւան Խաչատուր վարդապետի, Ս. Ղազար):

19. AP, ACTA, v. 93 (1723), f. 428.

20. AP, ACTA, v. 93 (1723), f. 429.

21. AP, SOCG, v. 652 (1726), f. 198.

22. AP, LOCG (= Lettere originali riferite nelle Congregazioni Generali), v. 118 (1724), f. 81.

23. Անդ, էջ 84:

24. Մխիթար Աբրահայ, Վենետիկէն, առ Տէր Մինաս Պարոնեան, Պաշտօնով, 1724 Յունիս 3 (Նամականի Մխ. Աբ., թ. 183):

Մխիթար Աբրահայ, իր գրութեան սկիզբը, ինք կը ճշտէ Տէր Մինասի նամակին 19 Մարտ թուականը, քանի որ Պարոնեան զայն ուղարկած էր առանց թուականի, Շիմայեան Սողոմոնի նամակին հետ, որ 19 Մարտ թուականը կը կրէր. Մխիթար ներողամիտ կ'ըլլայ Տէր Մինասին անուշադրութեան՝ նկատի առած այն դժուարին պարագաները, որոնց մէջ կը գտնուէր:

Բաւական կը համարէր Պարոնեան, ամէն վայրկեան սպասելով եկեղեցական իշխանութեան միջամտութեան: Գրելով Խաչատուր վարդապետին՝ այսպէս կը պաշտօնէր. «Վերջապէս խնդրեմ, Խաչատուր վարդապետ, զի գրիցէք Ս. Ժողովին, որ զիմ բանն հաստատեցէ՛ք ձեռամբ նոր եպիսկոպոսին, զի այսպէս ոչ քոյ հոգւոյ փրկութիւն»²⁵:

Վիեննայի Նուիրակը ժամանակին ստանալով Ս. Ժողովի 1 Ապրիլ թուակիր նամակը, Տէր Մինաս Պարոնեանի մասին տեղեկութիւն կը խնդրէ 22 Ապրիլ թուակիրով եւ արդէն 15 Յունիս թուակիրով կրնայ հաղորդել հաւաքած լուրերը Հռոմի Ս. Ժողովին²⁶: Բայց Թրանսիլլանիայէն Վիեննա հասած տեղեկութիւնները աւելի նպաստաւոր էին Տէր Մինաս Թորոսեանին՝ քան Պարոնեանին: Տեղեկատու եկեղեցականները Թորոսեանի դատելիքները եղած ըլլալով՝ արդարացուցեր էին զինքը Վիեննայի առջեւ²⁷:

Անտեղեակ յիշեալ ըննութիւններուն արդիւնքին՝ իր խղճին հանդարտութիւնը վերագոյնելու համար, Պարոնեան 20 Յունիս թուակիրով կը դիմէ Ս. Ժողովի քարտուղարին՝ շեշտելով դժուարին կացութիւնը. Տէր Թորոսեան սիրուած չէ Ժողովուրդէն եւ ասոր պատճառը Պարոնեան կը համարուի²⁸:

Վերջապէս, ամէն բան ընելով եւ հակառակ անոր որ իր առջեւ «ընդարձակ դուռ մը բացուած էր Աւետարանի քարոզութեան», սակայն զստած լրջալով «հակառակող տեղապահ մը», Պարոնեան կը խնդրէ պաշտօնապէս իր հեռացումը Թրանսիլլանիայէն՝ թէ որ կացութեան ճար մը ջխորհին՝ դառնալին արցունքով²⁹:

Ապարդիւն կ'ըլլայ Խաչատուր վարդապետի միջամտութիւնը իր 16 Սեպտեմբեր թուակիրով, ուղղուած Ս. Ժողովի ֆարդինալին, որպէսզի հոգեւորս Գէորգ Եպիսկոպոս Մարթոնֆիի փափաքը կատարուէր իր յաջորդին Գ. Անթարֆի Եպիսկոպոսին կողմէ՝ պաշտօնէն թիւնը յանձնելով Տէր Մինաս Պարոնեանին, որ լաւագոյն կերպով

25. Տէր Մինաս Պարոնեան, Կերլայէն, առ Խաչատուր վարդապետ, Վենետիկ, 1724 Ապրիլ 30 (Դիւան Խաչ. Վրդ., Ս. Ղազար):

26. AP, SOCG, v. 652 (1726), f. 199.

27. Անդ, էջ 200-204:

28. AP, SOCG, v. 652 (1726), f. 205-207.

29. AP, SOCG, v. 652 (1726), f. 208-209.

լրացնէր այդ պաշտօնին պայմանները: Սակայն խաչատուր վարդապետին այս դիմումը արդիւնք չի տար³⁰:

Այս անորոշ կացութենէն ազատելու համար՝ Պարոնեան լաւագոյն կը համարի հեռանալ Թրանսիլվանիայէն ու կ'երթայ Վիեննա, պատրուակելով Կերլացիներուն փափաքը, որ Կայսրէն առնէ այն առանձնաշնորհութիւնները, որոնք ժամանակին Գերպ. Վրծարեանին խոստացուած էին՝ ի շնորհս Կերլայի³¹:

Երկու տարի կը տեւեն Պարոնեանի ջանքերը եւ 1726 Նոյ. 10 թուականին շնորհուած հրովարտակը կը պարզեւէ Հայաքաղաքին՝ ակնկալուած այդ բոլոր առանձնաշնորհութիւնները³²:

Հակառակ այս բոլոր վատտակին՝ Պարոնեան Վիեննայի Նուիրակէն ալ տնահատանք ու քաջալերանք չի գտներ. ուստի զարմանալի չէ որ՝ յետ երկար խորհելու՝ որոշած ըլլայ դիմել Մխիթար Աբբազօր, 1724 Նոյ. 29 թուականի նամակով, խնդրելով որ զինք ընդունի անդամակցելու իր Մխիթարութեան: Սակայն Մխիթար Աբբազայր խորհեմ չի դտներ նման քայլ մը:

Նամակին ընդարձակութիւնը չի թողարտեր ամբողջական մէջբերում մը: Բաւական կը համարինք միայն քանի մը տող արձանագրել այստեղ այդ նամակէն, ուր կը նշմարենք Մխիթար Աբբազօր սուր հոգեբանի ձիրքերը հնազանդութեան ուխտին կտրուկացութեամբ. «Քանզի եթէ ընդ տասն աստիճան խոնարհութեան ի խորս նուաստ ճանաչման ինքեան իջանելով՝ չահեցեալ հնազանդութիւն իցէ բաւական, առ ի լինել հնազանդ լաթին մեծաւորի, ընդ հարիւր աստիճանի իջումն հազիւ բաւական դոլ կարէ նոյնոյ անձին առ ի լինել հնազանդ հայ մեծաւորի»³³:

Պարոնեան, յիշեւ լաւ հասկցած ըլլալու էր Մխիթար Աբբազօր մերժողական պատասխանին պատճառները, սակայն ինքզինքը վրչտացած կը զգայ: Հիմա այլեւս իր առջեւ բացուած տեսնելով հանդերձ «լիքար»՝ այսինքն տեղապահ ըլլալու հնարաւորութիւնը, քանի որ Թրանսիլվանիոյ նորընտիր եպիսկոպոսը՝ որ Վիեննայէն կ'անցնէր՝ նման խոստում մը ըրած էր իրեն, շատ կը ցաւի որ Մխիթար Աբբազօր հետ կրօնաւորիլը իրեն համար անկարելի էր³⁴:

30. AP, SOCG, v. 652 (1726), f. 210.

31. Նամակ Տէր Մինաս Պարոնեանի, Վիեննայէն, առ Մխիթար Աբբազայր, Վենետիկ, 1724 Նոյ. 3: Նոյն օրուան թուականով Պարոնեան գրած է նամակ մը Ս. Ժողովի Կարդինալին՝ նոյն առանձնաշնորհութեան մասին. AP, SOCG, v. 652 (1726), f. 211-212:

32. ՍՈՆԿՈՓ Ք., Ժամանակագրութիւն, հտ. Ա, 1901, էջ 124-125:

33. Մխիթար Աբբազայր, Վենետիկէն, առ Տէր Մինաս Պարոնեան, Վիեննա, 1724 Դեկտ. 22 (Նամակնի Մխ. Աբ. թ. 198):

34. Տէր Մինաս Պարոնեան, Վիեննայէն, առ Մխիթար Աբբազայր, Վենետիկ, 1725 Յունուար 18 (Դիւան Ս. Ղազարի):

Պարոնեան տակաւին Վիեննա կը մնայ 1725 տարուան ամառուան շրջանին, քանի որ բացի Կերլայի համար արքունական առանձնաշնորհութիւններու ստացումէն՝ դրադած էր նաեւ ուրիշ գործերով³⁵:

Ճիշտ այդ շրջանին, Թրանսիլվանիոյ Հայերը, հողեր գրաւելու ապօրինի ձեռնարկներու դիմելով, կը զայրացնեն կայսերական պաշտօնէութիւնը, վտանգելով ստացուած առանձնաշնորհութիւնները: Պարոնեանի միջամտութեան շնորհիւ միայն կը փաղաղին հողիները, եւ ստացուած առանձնաշնորհութիւնները կը մնան: Այս պատճառով ալ կ'երկարի Պարոնեանի կայքը Վիեննայի մէջ³⁶:

Միայն այն ատեն Պարոնեան կը տեղեկացնէ Հռոմի Ս. Աթոռը Հայերու կացութեան մասին: Յաւով կը նկատէ որ Թրանսիլվանիոյ Հայերուն քով պահերու մասին կային անկանոնութիւններ: Կային՝ որոնք լատիններուն կը հետեւէին, ուրիշներ՝ աղգային սովորութիւններուն, հուսկ մաս մըն ալ՝ կը ջանար երկու ձեւերը հաշտեցնել: Աւելի այս վերջիններու կը միտի Պարոնեան: Ըստ իրեն պէտք էր հին սովորութիւնը պահել, «բայց գործածեն կաթնեղէնները՝ ըստ լատինաց»: Կը խոստովանի որ ինքը աղգայիներուն հետ կը պահէ չորեքշաբթուան պահը, իսկ շաբաթ օրը՝ լատիններուն հետ: Մինչ այդ՝ տակաւին Վիեննա գտնուելով Թրանսիլվանիոյ համար նշանակուած եպիսկոպոսը, կը յուսար որ՝ ինքն ալ հոն երթալով՝ կարենար փոխանորդի պաշտօնը ստանձնել³⁷:

Կերլացի «բարեպաշտ եւ ջերմեռանդ մէկը», Շիմայեան Սողոմոն Աղան, իր նորակառոյց մատրան համար ներդրութիւններ ստանալու նպատակով դիմած էր Պարոնեանին: Ասիկա քաւական կարճ ժամանակի մը ընթացքին կը յաջողի ստանալ ներդրութիւնները. լիակատար ներդրութիւն՝ Աւետման սօսին օրը, իսկ Ս. Գրիգոր Լուսաւորչի խորանին համար շաբթուան քանի մը օրերուն՝ քաւարանի հողիներուն ի նպատակ³⁸:

Որքան որ Տէր Մինաս Ժամավաճառ ըլլալով Վիեննայի մէջ՝ ինքզինքը անխոյժ ցոյց կու տար Թրանսիլվանիոյ առաքելական խորհրդներուն նկատմամբ, սակայն Վիեննայի Նուիրակը համաձայն չէր այդ կեցուածքին. ունայն դրադանք կը համարէր Պարոնեանի կատարած ձեռնարկները եւ կը յորդորէր՝ որ վերադառնար Թրանսիլվանիա: Նոյնպէս յարմար չէ տեսնել որ Պարոնեան հոն եպիսկոպոսի «տեղապահ»ի պաշտօնը վարէր: Հետեւաբար Նուիրակը Հռո-

35. Տէր Մինաս Պարոնեան, Վիեննայէն, առ Մխիթար Աբբազայր, Վենետիկ, 1725 Յունիս 14 (Դիւան Ս. Ղազարի):

36. Տէր Մինաս Պարոնեան, Վիեննայէն, առ Մխիթար Աբբազայր, Վենետիկ, 1725 Սեպտ. 29 (Դիւան Ս. Ղազարի):

37. AP, SOCG, v. 652 (1726), f. 195.

38. AP, SOCG, v. 652 (1726), f. 196; ACTA, v. 96 (1726), f. 149.

մէն կը խնդրէր, որ Պարոնեանի ազդարարութիւն մը ուղղուէր: Բաւարար պատճառ մը չէր համարեր երկու Մինասներու միջեւ անհամաձայնութիւնը՝ որ Պարոնեան չկարենար իր պաշտօնը առաջ տանիլ: Իսկ պահքերու վերաբերմամբ՝ նկատել կու տար որ 1702 տարուան Յունուար 31ին տրուած վճիռը արեւելածէս կաթողիկէ համայնքներուն համար՝ որեւէ իրաւունք չէր տար Պարոնեանին ձեռնամուխ ըլլալու անոնց պահքերուն, աղօթքներուն, արարողութիւններուն եւ ծիսարանի կարգադրութիւններուն³⁹:

Պարոնեանի դէմ աննպաստ լուրեր կը հասնէին ոչ միայն Վիեննայէն՝ այլ նաեւ Հռոմէն, Թէադինեան վարդապետէ մը - Չէզարէ Ռեթանասըի - , որ իր Ուխտին ընդհանուր գործակալն էր: Այս վերջինս, ի միջի այլոց, հետեւեալ տրամադրութիւնները կ'ընէր. Տէր Մինաս Պարոնեան՝ 1) Հայոց պահքերը չի պահեր, 2) կ'ուտէ գերմանացի եւ հունգարացի ժողովուրդին հետ, 3) չի պահեր Մոնեղի պահքերը, 4) չի պահեր շաբաթ օրերը, 5) չատ փառասէր է, 6) եկեղեցւոյ մէջ եպիսկոպոսի գահին վրայ կը դառնայ, 7) ամսաթոշակ 320 Փիորին կ'ուզէ, նման Աւքեսեստ եպիսկոպոսին, 8) օծած է սկիւններ, 9) արտօնած է երրորդ կարգի արեւակիցներու պսակը, 10) կանոնաւոր չի քարոզեր, այլ կը պատըտի, հուսկ 11) կը ջանայ ժողովուրդը իր կողմը սիրաշահիլ:

Ապա նկատի առած՝ որ նորընտիր եպիսկոպոսը արդէն սահմանափակած է Պարոնեանի պաշտօնը միայն քարոզ տալու եւ քրիստոնէական սորվեցնելու, լաւագոյն պիտի ըլլար - ըստ միեւնոյն Թէադինեան հօր - զինքը Թրանսիլվանիայէն բոլորովին հեռացնել. ի հարկին կարելի էր չաւազոյն քարոզիչ մը եւ դաստիարակ մը գտնել Յիսուսեաններէն կամ Փրանկիսկեաններէն⁴⁰:

Թէադինեան վարդապետին թուարկած յօդուածներուն հետեւելով, նման պարունակութեամբ հարցարան մը կը յղիկէ Ս. Ժողովը Վիեննայի Նուիրակին, որ ապա, իր կարգին, ուղարկած է զայն Թրանսիլվանիոյ Արպա Եուրիայի եպիսկոպոսին, ստուգելու համար՝ թէ ո՛րքան հիմնուած էին զրպարտութիւնները Պարոնեանի մասին⁴¹:

Հաւանաբար հարցարանը մինչեւ Կերլայի Հայերուն հասած ըլլայ, քանի որ ասոնք՝ 1727 Սեպտ. 31ի իրենց ժողովի ընթացքին՝ Պարոնեանի դէմ լսուած զրպարտութիւնները կը քննեն եւ պաշտօնական նամակով մը, 1728 Յունուար 26 թուակիր, կը հաղորդեն իրենց պատասխանը⁴²: Նման պարունակութեամբ նամակ մը կը գրեն, 1 Մարտ

39. AP, LOCG, v. 121 (1726), f. 108, 111v; ACTA, v. 96 (1726), f. 144.

40. AP, ACTA, v. 96 (1726), 437.21.

41. AP, LOCG, v. 123 (1727), f. 23v-26.

42. AP, SOCG, v. 661 (1728), f. 220.

1728 թուակիր, նաեւ Պաշտօնակցիները՝ արդարացնելու համար Տէր Մինաս Պարոնեանը⁴³:

Ինչ որ կը տեսնուի, Պարոնեան վարդապետ՝ հնազանդելով Նուիրակին՝ դացած էր Կերլայ, ուր 1 Սեպտեմբեր 1727 թուականին կատարուած ժողովի մը արձանագրութեան ներքեւ կը տեսնենք իր ըստորագրութիւնը՝ իբր առաջին ստորագրող: Ժողովին մէջ բարեկարգական ընդհանուր որոշումներ առնուած էին⁴⁴:

Հաւանաբար երկու տարի, 1727-1729, մնացած է Թրանսիլվանիա: Զինք հեռացնելու որոշումը առնուած է 1728ի Յուլիսի 6ին⁴⁵:

Պաշտուր վարդապետն ալ յարմար տեսած էր՝ որ Պարոնեան հեռանար երկրէն, քանի որ օղը իրեն նպաստաւոր չէր: Արդէն իր տեղը որոշուած էր ուրիշ առաքեալ մը, Տէր Ղուկաս Վրծարեան եւ Հայոց համայնքն ալ համակամած էր Պարոնեանի հեռանալուն⁴⁶:

Որոշումը լսելով՝ երկար նամակ մը կը գրէ Պարոնեան Ս. Ժողովի Կարգինալին⁴⁷: Թրանսիլվանիայէն մեկնած ըլլալու է 1729 Մայիս-Յուլիս ամիսներուն եւ գուցէ հանդիպած ալ ըլլայ Տէր Ղուկաս Վրծարեանին⁴⁸:

Երբ Հ. Մանուէլ վարդապետ 1729 Մայիս 10ին Վիեննա կը հասնէր, իր առաքելական ցուպը ձեռք առած, դարձեալ գէպի Թրանսիլվանիա ուղղուելով, հոն չէր գտներ Պարոնեանը⁴⁹: Կը սպասէ տասը օր մը եւ կ'իմանայ՝ թէ Տէր Մինաս «դաւոց է ի վենա ընդ յետին արապայիցն»⁵⁰:

Իսկ երբ Պաշտօնակցի կը հասնի Հ. Մանուէլ Վրդ. Յուլիս 5ին՝ կը գրէ թէ «Միսոնարն Պէջ (Վիեննա) դացեր է վասն Պաշտօնակցոց քաղաքի շահուն. տես թէ վերջն որքան է ան գոնջէդ եւն.»⁵¹:

Լուր չունինք թէ ի՞նչ ձեւով կատարուած է առաքելութեան

43. Ամդ, էջ 222:

44. Գ. ԳՈՎՐԻԿԵԱՆ, Դրամսիլումիոյ Հայոց Մետրապոլիսը, էջ 115:

45. AP, ACTA, v. 98 (1728), f. 314, n. 34.

46. AP, SC (= Scritture riferite nei Congressi), Armeni, v. 9 (1728-1734), f. 92.

47. Ամդ, էջ 94:

48. AP, LOCG, v. 128 (1729), f. 237-239ի տուեալներուն համաձայն, Պարոնեան Մայիս 7ին տակաւին Թրանսիլվանիա կը գտնուէր: Բայց Յուլիս 20ին Վիեննա է արդէն. տես AP, SC, Armeni, v. 9 (1728-1734), f. 170.

49. Հ. Մանուէլ վարդապետ, Վիեննայէն, առ Միխիթար Արքահայր, Վենետիկ, 1729 Մայիս 10 (Դիւան Ս. Ղազարի):

50. Հ. Մանուէլ վարդապետ, Վիեննայէն, առ Միխիթար Արքահայր, Վենետիկ, 1729 Մայիս 21 (Դիւան Ս. Ղազարի):

51. Հ. Մանուէլ վարդապետ, Պաշտօնակցին, առ Միխիթար Արքահայր, Վենետիկ, 1729 Յուլիս 19 (Դիւան Ս. Ղազարի):

յանձնումը. արդեօք ուղղակի անձամբ Պարոնեանի՞ կողմէ՝ թէ ոչ դրաւոր կամ քերանացի միջնորդութեամբ մը:

Գլխաւորապէս երկու շարժառիթներ աղբաւ են՝ որ Պարոնեան թրանսիլլանիայէն հեռանար: Մէկը՝ հիւանդութեան պարագան, միւսը՝ իր կրած հալածանքները: Մտերմօրէն նկարագրած է իր հոգեկան վիճակը Մխիթար Աբբաճօր. «Ոչ գիտեն, կը գրէր, թէ վասն չսովորելոյն այնմիկ երկրին հաւային կամ թէ ալոց պատճառաց, մանաւանդ կարի յոյժ վասն հրապարակ անպատմելի հալածանաց՝ զորս ոմանք նախանձաւորք յարուցին ընդդէմ ինձ թարն արտի ղճմըտանաց եւ ես ըստ մեծաւորաց հրամանի, որ էր՝ զի մի ի մէջ ռամկի եւ նորատունկ ժողովրդեան ծնանիցին դաշթակղութիւնք ջանայցեմ զամենայն ինչ իբր անմոռնջ եւ համր. այնքան համբերեցի, մինչ բոլոր ի ներքս պիլէն քարածեալ հրեղէն ջերմ ինձ պատճառեաց... եւ ի Պաշտօնով իբր մահու մերձեալ իրայի, զանազան տօքտօրաց դառեալ վկայական գիրս, առաքեցին աստ Նունձին»⁵²:

Պարոնեան անշուշտ իր ֆիզիքական առողջութիւնը դէլք մասամբ վերագրած էր 1729ի ընթացքին: Սակայն մեծ բարւոքում մը տեսած ըլլալու չէ՞⁵³, քանի որ 1730 տարուան վերջաւորութեան՝ կաղղուրուելու համար Պոլիս երթալու փափաք կ'ունենայ⁵⁴:

Պարոնեան, զօրաւոր նկարագրի տէր մարդ, չի թուլանար իր պաշտօնին բերումով իրեն ինկած պարտականութիւններու կատարման մէջ: Ինչպէս որ կրցած էր յաջողցնել Կերլայցիներու համար խոստացուած առանձնաշնորհումները ստանալ, նոյնպէս կ'աշխատի ձեռք բերելու Պաշտօնովցիներու համար կայտերական ուրիշ հրովարտակ մը: Զեռնարկներու մասին տեղեակ կը պահէր թէ՛ Հռոմի Մեծաւորները⁵⁵, թէ՛ Մխիթար Աբբաճայրը⁵⁶: Այս ձեռնարկը երկար տարիներ կը զբաղեցնէ Պարոնեանը եւ միայն 1733 տարուան Օգոստոս 11ին է որ լոյս կը տեսնէ կայսերական հրովարտակը՝ Կարոլոս Զ.ի օրով⁵⁷:

Այս բոլոր զբաղանքներէն եկած նեղութիւններուն վրայ՝ բարոյական նեղութիւններն ալ երբեք չէին պակսեր Պարոնեանի հոգեկան

52. Տէր Մինաս Պարոնեան, Վիեննայէն, առ Մխիթար Աբբաճայր, Վենետիկ, 1729 Օգոստոս 13 (Դիւան Ս. Ղազարի):

53. AP, SC, Armeni, v. 9 (1728-1734), f. 251.

54. AP, SOCG, v. 669 (1731), f. 163.

55. Տես Ժանօթ. Թիւ 53, 54:

56. Տէր Մինաս Պարոնեան, Վիեննայէն, առ Մխիթար Աբբաճայր, Վենետիկ, 1730 Օգոստոս 18 (Դիւան Ս. Ղազարի):

57. AVEDIK LUKACS, Պաշտօնովի քաղաքացիներու խորհուրդը, «Armenia», XVII (1903), էջ 329 (հունգարերէն): Տես աւելի ընդարձակօրէն Գ. ԳՈՎՐԻԿԵԱՆ, Հայք յեղիսաքրքուպոլիս Դրամսիլուամիոյ, «Աղբ. Մատո», ԺԱ, Վիեննա, 1893, էջ 68-87:

աշխարհին մէջ: Սրտի մեծ կակիծով կը լսէր Կերլայցի լուրերը, ուսկից աքսորուել էր Տէր Մինաս Թորոսեան, քաղաքին ժողովրդապետը, բռնուած ըլլալով բարոյական յանցանքներու վրայ. ասիկա Տէր Մինաս Պարոնեան փր բոլոր ջանքերուն իբրեւ ցնդումը կը նկատէր, եւ կը հաղորդէր իր ցաւը Մխիթար Աբբաճօր⁵⁸:

Ասկէ զատ, Պարոնեան կը լսէ նաեւ որ Տէր Ստեփանեան վարդապետը, անցնելով թրանսիլլանիոյ վրայէն, պահքերու մասին ինչ ինչ փոփոխութիւններ մտցուցած է, «որպէս է սովորութիւն հայոց վարդապետաց», որուն համար անշուշտ կը նեղուի⁵⁹:

Պարոնեան իր սրտի ազնիւ զգացումներն ալ կը յայտնէ Մխիթար Աբբաճօր, մանաւանդ անոր ձեռակերտին նկատմամբ. «յօժարապէս զմեծապնդան կրել պատրաստ եմ վասն սիրոյ աղքատ վանքիս մերոյ, որոյ վասն զարիւնս յեղել պատրաստ եմ»⁶⁰:

Պարոնեան, 1730 տարուան ընթացքին, դեռ քաղմաթիւ նամակներ գրած է Մխիթար Աբբաճօր, որոնց պարունակութիւնը դրամական գործառնութիւններու վերաբերելով, չենք ուղեր երկարել առնոց մասին⁶¹:

Յաջորդ տարիները՝ Տէր Մինաս Պարոնեանի կեանքին մէջ մասնաւոր յարաբերութիւն մը չեն նշեր Մխիթար Աբբաճօր եւ անոր առաքելական գործունէութեան հետ, քանի որ կը հեռանար թրանսիլլանիոյ շրջանակներէն եւ նոր առաքելական ասպարէզ մը կը ստեղծէր իրեն համար:

Մինչ Վիեննա կը ստանալէր, Պարոնեան սկսեւ էր խորհիլ վերջնականօրէն թողուլ թրանսիլլանիան, եւ երթալ Պելկրատ կամ Պոնտիս, շարունակելու համար իր առաքելութիւնը⁶²: Իր բոլոր տարակոյսները կը փարատին՝ երբ Հռոմի մեծաւորները իրեն հրաման կու տան երթալու Պոլսոյ առաքելութեան, զոր սիրով յանձն կ'առնէ⁶³:

58. Տէր Մինաս Պարոնեան, Վիեննայէն, առ Մխիթար Աբբաճայր, Վենետիկ, 1730 Սեպտ. 18 (Դիւան Ս. Ղազարի):

59. Տէր Մինաս Պարոնեան, Վիեննայէն, առ Մխիթար Աբբաճայր, Վենետիկ, 1730 Օգոստոս 18 (Դիւան Ս. Ղազարի): AVEDIK LUKACS, Նիւքեր Պաշտօնովի գիւղացի, «Armenia», VI (1892), էջ 309 (հունգար.):

60. Տէր Մինաս Պարոնեան, Վիեննայէն, առ Մխիթար Աբբաճայր, Վենետիկ, 1730 Մարտ 4 (Դիւան Ս. Ղազարի):

61. Տէր Մինաս Պարոնեան, Վիեննայէն, առ Մխիթար Աբբաճայր, Վենետիկ, 1730 Յունուար 24, Փետրուար 25, Մարտ 4 (երկու նամակներ), Մարտ 22 (երկու նամակներ), այս նամակներէն ոմանց պատասխանած է Մխիթար Աբբաճայր իր 1730 Մարտ 11 թուակիր նամակով (թիւ 385), միւսներուն պատասխանող նամակներ չունինք Մխիթար Աբբաճայրէն:

62. AP, SOCG, v. 669 (1731), f. 164.

63. AP, ACTA, v. (1731), f. 35, n. 7.

Սակարն Պարոնեան անմիջապես չի հեռանար Վիեննայէն. կը ապաստէ որ ձեռք ձգէ կայսերական հրովարտակը՝ ի նպաստ Պաշտօնավար ժողովուրդին, 1733 Օգոստոս 11 թուականով⁶⁴:

Շատ ժամանակ չ'անցնիր եւ Պարոնեան երկրորդ քայլ մը կ'առնէ՝ Պոլսոյ առաքելութիւնը չսկսած՝ ընդգրկելով լատին ծէսը, 1733 տարւոյն վերջաւորութեան⁶⁵:

Պարոնեանի Պոլսոյ առաքելութեան մասին շատ քիչ տեղեկութիւն ունինք: 1734 տարուան սկիզբի ամիսները միայն մնացած ըլլալու է Պոլիս եւ զբաղած աւելի այն հայերով՝ որոնք կ'ուզէին Պոլսէն հեռանալ: Եւ իրապէս կը յաջողի ձեռնարկին մէջ ու թեմեշվար կը փոխադրէ իր այրի քոյրը եւ գաւազները. կ'արժանանայ նաեւ Մխիթար Աբբազօր քնահատական խօսքերուն եւ քաջալերանքին՝ որ այդ վտանգաւոր երկրէն կրցած էր շատ մը ազգայիններ ազատել, ապահովելով անոնց համար՝ օտար երկրի մէջ՝ վստահ օթեւաններ⁶⁶:

Քիչ տեղեկութիւն ունինք Տէր Մինաս Պարոնեանի կեանքին վերջին տարիներու մասին: Պեանքի աշխատանքին շրջանին զինք առաւելաբար նուիրուած կը տեսնենք ընկերային-մարդասիրական նպատակներով երկրագործական, անասնաբուժական եւ արհեստագործական զբաղանքներու: 1735ին, «Աբբաջ» տխրոյսը կրելով, Հունգարիոյ հարաւակողմը գտնուող Պամաթ գաւառին չերամագործարանի վերահսկիչ կը կարգուի: Տարիներ յետոյ, 1747ին, տակաւին երկրագործութեամբ կը զբաղի. Յունուար ամսոյն մէջ, հրամանագիր կը խնդրէ կաշեգործարանի մը համար, ապա անոր շուրջի հողերը վարձելու խնդրանք կ'ընէ:

1752ին բրինձի մշակութեան ընկերութիւն մը կը հիմնէ: Յաջորդ տարին արծաթուժութեան գործին կը նուիրուի⁶⁷: Վախճանած պէտք է ըլլայ 1770ին:

64. AVEDIK LUKACS, Erzsébetváros Monografiája, Szamosujvár (1896), XVII-XXIV.

65. AP, ACTA, v. 103 (1733), f. 224.

66. Մխիթար Աբբազօր, Վենետիկէն, առ Տէր Մինաս Պարոնեան, Թեմեշվար, 1734 ամառ (Նամականի Մխ. Աբ., Թ. 476):

67. Այս տեղեկութիւնները ազնուօրէն տրամադրած է մեզի Պր. Գորպուլի Տոմոնքոշ:

Տէր Մինաս ԽԵԿԱՆՈՍԵԱՆ

(1700–1766)

Տէր Մինաս Խեկանոսեան՝ էր այն բարեկիրթ պատանին, որուն համար Մանուէլ Վրդ. 1720 Հոկտեմբեր 15 թուակիր նամակով Մխիթար Աբբազօրմէ կը խնդրէր լատիններէն բեզուով շարադրուած մկրտտութեան վկայագիր մը, որպէսզի կարենար իր ընկերոջ Խաչիկին հետ Հռոմ երթալ եկեղեցական ուսումները շարունակելու համար, քանի որ նոյն ատեն քաջակայ ըրրալով Կերլայէն թէ՛ Տէր Յովնան Եպիսկոպոսը եւ թէ՛ Տէր Մինաս Թորոսեան, կարելի չէր եղած պատրաստել տեղւոյն վրայ պաշտօնական վկայագիր մը¹: Մինաս եւ Խաչիկ հաւանօրէն տարեկից ըլլային:

Մխիթար Աբբազօր վկայականէն գատ՝ Մինաս Խեկանոսեան հետը կ'առնէր նաեւ Ալբա Եռլիայի եպիսկոպոս Գերպ. Գէորգ Մարթոնֆի² եւ ազգայիններու կողմէ տրուած յանձնարարականներ, որոնք պէտք էին յանձնուիլ նախ Խաչատուր վարդապետին եւ ապա իր ձեռքով Հռոմի Ուրբանեան Վարժարանին³: Թէպէտեւ իսկոյն չեն կրցած արձանագրուիլ տեղւոյ պահասէն, բայց յաջորդ տարին վերջնականօրէն կ'ընդունուին⁴:

Խեկանոսեան մականունը գործածուած է Դամիէլեան եւ Դամիէլ ձեւերով ալ: Մինասին հօր անունը եղած է Խեկանոս Դամիէլեան, բայց իր գաւազները Խեկանոսեան կոչուած են, ազգայիններու կողմէն. յետոյ կը մոռցուի Խեկանոսեան մականունը եւ կը դառնան Դանիէլեան մականունին: Այս Դանիէլ մականունով ստացած են ազնուականութիւնը 1725ի Յուլիոս 3ին եւ մինչեւ վերջերը պահած են այդ անունը:

Ազնուագարմ աշխատանքը՝ Մինասին տրամադրած իրենց դրամական առաքումները Մխիթար Աբբազօր ձեռքով կը կատարէին, անշուշտ ծածուկ, եւ միայն մի քանի անգամներ գտնուած են նամականերուն մէջ փոքրիկ գումարներ՝ իբրեւ նուէր Հիմնադրին⁵: Հաս-

1. Տես «Բաղմալէպ», ՃԼԵ (1977), էջ 152:

2. AP, SOCG, v. 628 (1721), f. 78.

3. AP, SOCG, v. 628 (1721), f. 81.

4. AP, SOCG, v. 628 (1721), f. 82.

5. «Թոտորայի Եղբայրն Պարոն Ամբրոսի ընկալաւ զգիր ի Մինաս եղբորմէն իւրմէ, որ ի գուլէճն: Եւ կամեցաւ առաքել եղբորն իւրում Յոսէփ, եւ յոյժ խնդրեաց յինէն որ ինձ տայցէ, եւ ես ոչ կարացի տալ զբացատութիւն, այլ առի ի նմանէ 6 ոսկի որպէս Բարձրութիւն Վեհապետութեան առաքելցէ փ գուլէճ՝ Յոսէփ, զի

կընալի հպարտանքով մը կը դիմեն Մխիթար Աբբաճօր, իրենց կղերական եղբոր համար⁶։

Հոգեպէս ալ կապուած Մխիթար Աբբաճօր եւ անոր Հաստատութեան հետ՝ Խնկանոսեան եղբայրները, հաղիւ իմացած Տէր Մինասի ուսումներուն աւարտումը, փափաք կը յայտնեն տեղեկանալու՝ թէ արդեօք իրենց հարազատը, Հոռոմէն դարձին, պիտի կարենա՞յ քանի մը օր Վենետիկ, մենաստանին մէջ, անցընել։ Խլխահաղուններուն այս անկեղծ փափաքին չկարենալ ընդառաջելով, Մխիթար Աբբաճօր ազնուօրէն կը պատասխանէ՝ բացատրելով վանքին պայմանները եւ կանոններուն պարտադրութիւնները, որոնք չէին թոյլատրեր՝ որ միաբանութեան անդամ չեղող անձեր վանքին մէջ բնակէին⁷։

Ընտանիքին տրուած այս պատասխանէն զատ՝ Մխիթար գրած է նաեւ Տէր Մինասին, որ դեռ Հոռոմ կը գտնուէր եւ իր ալ նկատառութեան յանձնած է վանքին մէջ բնակելու անկարելիութեան պարագան⁸։

անտի գիր գայցէ տա, թէ եհաս առ իս»։ Նամակ Հ. Մանուէլ վարդապետի, Պաշտօնովէն, առ Մխիթար Աբբաճօր, Վենետիկ, 1722 Փետր. 13 (Դիւան Ս. Ղազարի)։

«Ես յառաջնում գրութեանց միոյն մէջն գրեալ էի թէ ըստ խնդրոյ Աղաչայ Պիրով Ամիրային, որ է եղբայրն իւր Աղաչայ Թատորաչն, ինձ աստ 6 ոսկի պիտի որ տայ՝ պի ի գորէճն փւր եղբորն Մինասին Վէհդ իմ առաքիցէ 6 ոսկի. շուտով խնդրեմ որ զրկես ի գորէճն եւ գիր»։ Հ. Մանուէլ վարդապետ, Պաշտօնովէն, առ Մխիթար Աբբաճօր, Վենետիկ, 1722 Մայիս 12 (Դիւան Ս. Ղազարի)։

6. «Գերայրգելի եւ մերայ պատուելի նայեւ Հոռոմը բարեկամին մերոյ Հայրաբային. Խօսարհական սիրոյ ողձուն գեր յարգելութեան մէղաւորնումէ ամէնէն հաւատար արխնըն Ամիրայէն Մէղտեսի ՂՈՒՆԿԻԱՆՈՍԻ որդոցնմէ եւ Համգոյն, Ամիրային եղբորէն. սոքա ան եղբարք Տէր Մինասին որ է ի Հոռոմ»։ Նամակագիր Ամիրայ, որդի մէղտեսի Խնկանոսի փոքրը ձարայ, Հանգոյ մէղտէսի Խնկանոսի որդի ծառայ ձեռնըռանոց (»)» 1730 Փետր. 20 (Դիւան Ս. Ղազարի)։

7. «Նաեւ Աղաչայ Հանգոյն եւ Ամիրային թուղթ որ գրեալ էիք կարգացի, եւ իմացայ տղիտաւորութիւնդ. զի յոյժ քարւօք տղանակաւ շարադրեալ էիք. իրաւ որ ես լուայ թէ գրեալ ամ առ Վէհդ իմ գայն ինչ խնդիր՝ թէ իբր յորժամ Տէր Մինասն, ի Գորէճէն, նստցի այդր մէկ քանի ամիս, եւ նոքա յօժարութեամբ հատուցանեն զարկուտն. բայց որպէս Տեսանդ եւ ինձ արխնա ծաղրիչ թըւեցաւ այս լուր, եւ զմեզայ արդելու աստ, ըստ ամենայնի յօժարութեամբ իմով՝ բայց ոչ եղեւ դեղ եւ սպեղանի»։ Հ. Մանուէլ վարդապետ, Պաշտօնովէն, առ Մխիթար Աբբաճօր, Վենետիկ, 1730 Մայիս (Դիւան Ս. Ղազարի)։

8. «Վերապատուեցելոյ Եղբոր մերում Տեսան Մինասայ Դանիէլեան. ...Եւ այժմ զայս գիտել պարտիս, զի իրաւի եղբարքն թո գրեալ էին առ իս, զի ի դառնալ թո արտի՝ զժամանակ ինչ առ մեզ մնայցես, առ ի զարգանալ ի հայ լեզուով։ Եւ ես նոցին պատասխանեցի զայս, թէ յորժամ գայցէ նա՝ խօսիմք ընդ նմա եւ ... որ ինչ պիտոյ է նմա լաւ ուսանելոյ՝ հոգ տանիմք եւ առաջարկեմք զի լաւ ուսանիցի զհայ լեզու»։ Մխիթար Աբբաճօր, Վենետիկէն, առ Տէր Մինաս Խնկանոսեան-Դանիէլեան, Հոռոմ, 1730 Օգոստոս 12 (Դիւան Ս. Ղազարի)։

Այս փափաքները հեռաւոր նախապատրաստութիւններ էին⁹։ Տէր Մինաս բաւական ետք պիտի հասնէր Վենետիկ։ 1732ին ղինքը տալիս Հոռոմ կը գտնենք՝ ուր կը փափաքէր մնալ, նախ քան իր պաշտօնավարութիւնն սկսիլը, հայերէն լեզուն աւելի վաւ սորվելու, ինչպէս նաեւ հայ ծէսին մէջ հրահանգուելու համար¹⁰։

Թէ որքան սորված ըլլայ հայերէնը՝ չենք գիտեր։ Վենետիկ կը հասնի 1733 տարուան Համբարձման տօնին՝ Տէր Խաչիկի հետ միասին, քանի մը շաբաթ մնալու դիտաւորութեամբ¹¹։ Սակայն չեն իջեւանիր վանքին մէջ՝ այլ քաղաքը¹²։

1733ի Ապրիլին՝ Պաշտօնովի ժողովուրդը «պզիւր հրաւիրման գրեցին նմա» (Տէր Մինասին) եւ «Հրամայեցէք»՝ արարին. բայց ոչ գիտեմ, կը շարունակէ Հ. Մանուէլ վարդապետ, սրահասանիւն¹³։

9. Նամակ Տէր Դանիէլեան Մինաս Խնկանոսեանի, Հոռոմէն, առ Մխիթար Աբբաճօր, Վենետիկ, 1732 Յունուար 19, որ ինչ ինչ դրամական հաշիւներ կը կարգադրէ։ Նամակ Աղա Պետրոս Քէլեանի, Պելկրատէն, առ Մխիթար Աբբաճօր, Վենետիկ, 1732 Յունուար 20, ուր կարգադրութիւն կ'ընէ Աղան՝ որ Տ. Մինաս 50 ոսկի առնէ Վենետիկէն եւ անով տուրքերու մասունքի տուալ մը քնէ, ինչպէս կը գրէր նաեւ Հ. Մանուէլ վրդ. այս մասին առ Մխիթար Աբբաճօր։ Աղա Պետրոս, Մխիթար Աբբաճօր քարեկամ, մասնաւոր յանձնարարութիւններ կ'ընէ եւ կը խնդրէ նաեւ որ գէթ Բարեկենդանի օրերուն Վենետիկի մէջ չմնայ Տէր Մինաս, այլ վանքը կարենայ կենալ (Աղա Պետրոս Քէլեան, Սիպիւնէն, առ Մխիթար Աբբաճօր, Վենետիկ, 1732 Սեպտ. 18 եւ 1733 Յունուար 16, Դիւան Ս. Ղազարի)։

10. Աւետիք Լուքսոյի հաւաքած տեղեկութիւններուն համաձայն 1733 Ապրիլ 6ին Պաշտօնովցիները 250 Փիորին կը հաւաքեն իբրեւ ճամբու ծախս՝ որպէսզի Տէր Մինաս կարենար Հոռոմ երթալ եւ քահանայ ձեռնադրուի։ Տես «Armenia», 2. տարի, 1892, տետր 10։

Նոյնքան դումարի մը մասին գրած է Գերպ. Գովրիկեան (տես Հայք յնդիւսաբեքուպոլիս, հտ. Ա, էջ 218)։ «Քաղաքը հաշիւ ընելով՝ վճարած է իր հօրը 50 ոսկի կամ 250 հունգարական Փիորին եւ պայման կը դրուի, որ Տէր Մինաս մինչեւ ի մահ ծառայութիւն ընէ, իւր կարողութեան համեմատ, իբրեւ քահանայ եւ իբր ուսուցիչ...»։ Այս տուեալներէն կը տեսնուի, որ Ուրբանեան վարժարանի կապուած աշակերտի մը համար տրուած դումարի մը մասին է խօսքը, որով ազատ կ'ըլլային Դպրատան ինչ ինչ կապանքներէ։

11. Մխիթար Աբբաճօր, Վենետիկէն, առ Մինաս Պարոնեան, Վիեննա, 1733 (Նամակ թ. 392)։ Սակայն համեմատելով Աղա Պետրոս Քէլեանի նամակներուն հետ, չենք գտնել թ. 392 նամակին մէջ յիշուած Տէր Խաչիկը՝ որ 1732 Սեպտ. 8ին հասնի է Պաշտօնով (տես նամակ Աղա Պետրոս Քէլեանի, Սիպիւնէն, առ Մխիթար Աբբաճօր, Վենետիկ, 1732 Սեպտ. 8, Դիւան Ս. Ղազարի)։

12. Հ. Մանուէլ վարդապետ, Պաշտօնովէն, առ Մխիթար Աբբաճօր, Վենետիկ, 1733 Մարտ 12 (Դիւան Ս. Ղազարի)։

13. Հ. Մանուէլ վարդապետ, Պաշտօնովէն, առ Մխիթար Աբբաճօր, Վենետիկ, 1732 Ապրիլ 30 (Դիւան Ս. Ղազարի)։

Վերջապէս Տէր Մինաս կը հասնի իր պաշտօնավայրը, հաւանաբար Նոյեմբեր ամսուան մէջ, եւ սիրալիր կ'ընդունուի Հ. Մանուէլ վարդապետէն¹⁴:

Առաջին իսկ վայրկեանէն՝ ջերմ աիրով կը կապուին իրարու, եւ երիտասարդ եկեղեցականը միշտ լաւ տրամադրութեամբ կը վարուի ծերունի Մխիթարեան վարդապետին հետ՝ որքան ատեն որ ան Պաշխալով կը մնայ¹⁵:

Կ'երեւի թէ ինքը ազգած լըլայ Պետրոս Աղա Բէլեանի վրայ՝ որ առաջին մեծ բարերարը կը դառնայ Մխիթարեան Միաբանութեան, կտակելով անոր իր սեփական տունը՝ ուր սիրտի կանգնէր Մխիթարեան առաջին վարժարանը¹⁶:

Տէր Մինաս օգնած է նիւթապէս ալ Հ. Մանուէլ վարդապետին՝ երբ ան 1735 տարուան Մայիս ամսուան մէջ կը հիւանդանայ. «եկն առ իս, կը գրէ, Տէր Մինաս Խնկանոսեան աղաչանօք, պաղատանօք, թէ այս ամի մնայցեմ աստ վասն իւր օգտին...»¹⁷:

Հ. Մանուէլ վարդապետի վաղը դառնալէն ետքը Տէր Մինաս կարծես քիչ մ'աւելի համարձակ գլխով ինքզինքը, բարենորոգչական կարգ մը ձեռնարկներ կը կատարէ՝ «եկեղեցի երթալու, դպեստեւէններ հաղնելու, գինետուն չերթալու, Հրեշտակ Տեառնէն յետոյ դուրսը չմնալու նկատմամբ եւ այլն»¹⁸: Այսպէս կը շահի թէ՛ Պաշխալովի, թէ՛ Կերլայի ազգայիններուն համակրանքը, որոնք իր առաջնորդութեամբ ստորագրութիւն կը հաւաքեն՝ թէ իրենք առ այժմ հաւան չեն Հայոց եպիսկոպոսական Աթոռին վերահաստատման, մանաւանդ ի շնորհս Տէր Մինաս Թորոսեանի, որ նոյն ատեն, հաւանաբար նոյն նպատակները հետապնդելու դիտաւորութեամբ, Վիեննա՝ Կայսերական Դուռը կը բախէր¹⁹: Խնկանոսեան բարձր գո-

14. «Եւ այժմ, մինչ եկն Յարգելի Տէր Մինաս, ոչ դադարելով պատմել եւ գովասանել զխոհեմութիւն Վեհիդ, նաեւ արկանել ի սրտի խմում զխոհեմասն՝ չուտով համարձակեցաւ կոչել զիս ի տուն, եւ յետ քաղում խօսակցութեանց, յայտնել՝ թէ այսուհետեւ առաջագործմ որ զայն ազայն ստացեմ ի վանքն» (Հ. Մանուէլ վարդապետ, Պաշխալովէն, առ Մխիթար Աբրահայր, Վենետիկ, 1733 Նոյ. 19, Դիւան Ս. Ղազարի):

15. Հ. Մանուէլ վարդապետ, Պաշխալովէն, առ Մխիթար Աբրահայր, Վենետիկ, 1734 Մայիս 21 (Դիւան Ս. Ղազարի):

16. Հ. Մանուէլ վարդապետ, Պաշխալովէն, առ Մխիթար Աբրահայր, Վենետիկ, 1734 Յուլիս 5 (Դիւան Ս. Ղազարի), որով կը թելադրէ շնորհաւորել Տէր Մինասը՝ քանի որ Աղայա Պետրոս անոր թելադրութեամբ տրամադրուած պիտի ըլլար Վանքին բարերարելու:

17. Հ. Մանուէլ վարդապետ, Պաշխալովէն, առ Մխիթար Աբրահայր, Վենետիկ, 1735 Յունիս 22 (Դիւան Ս. Ղազարի):

18. ԳՈՎՐԻԿԵԱՆ, Հայք յեղիսաքեթուպոլիս, հտ. Ա, էջ 218:

19. ԳՈՎՐԻԿԵԱՆ, ամգ, էջ 224-226:

վասանքի կ'արժանանայ իր տեղացի հաւատացեալներէն. «Տէր Մինաս Խնկանոսեան, կը կարդանք զեկոյցի մը մէջ, էլիզաբէդ քաղաքի, 40 տարեկան, լեզու հայնակ, մաճրնակ, դալիանակ եւ օղանակ դիտցող: Զալ վարի համալըները եւ զՖիլօֆիան նաեւ զթէօլօկիան Հըրօմ բրօթականդայ. կօլէճին մէջ լըմընցուցիչէյ: Զվարդապետութիւնը երկուսինն ալ արիւ է: Անկից դարձած... բլէպանուշի օֆիճիումը դօվելի ունի. եւ այս տարուս մայիսի ամսուն Արքի Տիա-դօնուսով բրէՖէպուրայով էլիզաբէդացոց, կուրկինցոց, ճուրճով սէն միգրուչոց, չուք սիբիլիցոց եւ գեղարվաչարհէյցոց պաշխը՝ վելու արժանաւոր եղել է»²⁰:

1740ին Տէր Մինաս Խնկանոսեան կը բարձրանայ դաւառական ժողովրդապետի աստիճանին, ապա ոսկի շղթայակիր կանոնիկոս կ'անուանուի՝ 1747ին²¹: 1746ին կը հիմնէ «Բրիտտոսի Զարչարանաց» Եղբայրութիւնը²²:

Շինարարական գործերէն յիշելու ենք 1739 թուականին կառուցած քահանայատունը՝ Հոռօի Հաւատոյ Տարածման Ժողովին նպաստով: 1754ին շինել տուած է Լենճէլ Մարկաւազ Անդրէասի անուանադրուած տունը՝ որ յետոյ վերածուած է, Ս. Երրորդութեան ընկերակցութեան օժանդակութեամբ, քահանայի քնակարանի եւ դպրոցի: Իր կողմէ 1000 հունգարական ֆիորինով մասնակցած է շինութեան: Նկատելու ենք որ իր ստացած ամսականը - 100 ֆիորին - քաղաքի դատաւորի ամսականէն աւելի էր:

Իր մահկանացուն կը կնքէ 1766ի Յունիս 30ին²³:

Հ. ՂՈՒԿԱՍ ՖՈԿՈԼԵԱՆ

20. ԳՈՎՐԻԿԵԱՆ, ամգ, հտ. Բ, էջ 41-42:

21. «Armenia», Ե. տարի, 1891, տետր 12:

22. Ամգ, Բ. տարի, 1888, տետր 2:

23. Ամգ, Ե. տարի, 1891, տետր 12:

Résumé

MATERIAUX POUR L'HISTOIRE DE LA COLONIE
ARMÉNIENNE DE TRANSYLVANIE

TROIS ECCLÉSIASTIQUES ARMÉNIENS HOMONYMES
EN TRANSYLVANIE ET LEURS RELATIONS AVEC LE VÉNÉRABLE
ABBÉ MEKHITAR (1719-1736)

P. LOUKAS FOGOLYAN

L'A., connu déjà aux lecteurs de *Bazmavep* par ses travaux sur la colonie arménienne de Transylvanie, étudie dans cet article la vie de trois ecclésiastiques arméniens catholiques qui portaient le même prénom arménien et dont la mission pastorale en Transylvanie s'est déroulée presque dans les mêmes années. Souvent ils ont été confondus dans la littérature historique. Ce sont les trois Tēr Minas, dont le premier, Minas T'orosean (1690-1760), était le neveu du célèbre chroniqueur et lexicographe Step'anos Rošk'ay de Pologne, devenu à l'âge de trente ans curé de Gerla. Le deuxième, Minas Paronean (1694-1770), élève de la Propagande, fut envoyé en Transylvanie comme «visiteur», «vicaire» et prédicateur apostolique. Il y rencontra la résistance de M. T'orosean qui lui procura bien des ennuis. La querelle ayant été remise par la Propagande au jugement du Nonce de Vienne, celui-ci se prononça en faveur de T'orosean se basant sur des relations rédigées par des anciens compagnons de classe de ce dernier. Paronean s'adressa alors à Mekhitar lui demandant d'être admis dans sa Congrégation, mais la réponse fut négative. Il passa ses dernières années se dédiant à des activités sociales pour améliorer surtout la production agricole de la région. Le troisième de ces ecclésiastiques est Minas Xnkanosean-Daniëlean (1700-1766), lui aussi élève de la Propagande. Renommé parmi ses contemporains par sa culture et sa connaissance de langues, il lia son nom à une série de constructions paroissiales. Il fonda en 1746 la Confraternité de la Passion du Christ.

Remarquons, enfin, que dans la littérature non arménienne ces trois ecclésiastiques sont mentionnés par des noms qui sont une trasposition adaptée de leurs noms arméniens, respectivement: Mihály Theodorovics, Minas Barun(ian) et Mihály Dániel.